ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**1 մարտի 2018 թվականի N Մ - 126 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1145-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի փետրվարի 23-ի համաձայնեցման թերթը և հաշվի առնելով Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի 2018 թվականի փետրվարի 23-ի N CO-013-18 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը՝ (3 տեղ, 18 կգ ընդհանուր քաշով, 4,248 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 65,300 դրամ, ցանկը կցվում է, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացման» ծրագրի մասին» N Մ-1145-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նախագահ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԿՈՆՖԻԳՈՒՐԱՑԻԱ | ՔԱՆԱԿ | ԱՐԺԵՔԸ (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|
| 27-դյույմ iMac- ը Retina 5K էկրանով | 3.4 GHz 4 միջուկանի պրոցեսոր, 7-րդ սերունդ Intel Core i5 պրոցեսոր, Turbo Boost մինչև 3.8 GHz | 1 | 1 742 |
| Մակ մինի (Mac Mini) | 3.0 GHz 2 միջուկանի պրոցեսոր, Inel Core i7 (Turbo Boost մինչև 3.5 GHz) | 1 | 1 189 |
| 13 դյույմ Macbook | 2.2 GHz երկու միջուկանի Intel Core i7 պրոցեսոր, Turbo Boost մինչև 3.2 GHz | 1 | 1 317 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ՝** | | **3** | **4 248** |

Հարգանքով
Տնօրենի ժ/պ Արմինե Սահակյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**1 մարտի 2018 թվականի N Մ- 127- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի փետրվարի 20-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էյչ Այ Ռիայ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01564042) 2018 թվականի փետրվարի 13-ին կնքված՝ 011-ME18 պայմանգրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 909,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**1 մարտի 2018 թվականի N Մ-128- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի փետրվարի 20-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ «Դերեղ» մասնաճյուղ (ՀՎՀՀ՝ 01520882) 2010 թվականի հունվարի 20-ին կնքված՝ N 000057 պայմանագրում (2015 թվականի օգոստոսի 19-ի համաձայնագիր) նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի փետրվարի 1-ից մինչև 2019 թվականի փետրվարի 28-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 409,752 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2016 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված՝ N 3462977 և N 3462959 պայմանագրերում նշված գործարքները, որով նախատեսվում է 2018 թվականի փետրվարի 1-ից մինչև 2019 թվականի փետրվարի 28-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 160,008 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2018 թվականի փետրվարի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի մատակարարում՝ 961,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**1 մարտի 2018 թվականի N Մ-129- Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի փետրվարի 20-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2018 թվականի հունվարի 18-ին կնքված՝ N 32648111 պայմանգրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական ցանցին միացման աշխատանքի իրականացում՝ 231,666.67 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 մարտի 2018 թվականի N Մ-130-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի փետրվարի 23-ի համաձայնեցման թերթը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ֆուտբոլի ազգային հավաքականների համար ուղարկված մարզահագուստի (4 տեղ, 41 կգ ընդհանուր քաշով, 2,919.08 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 մարտի 2018 թվականի N Մ-131-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի փետրվարի 23-ի համաձայնեցման թերթը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հայցեով ֆուտբոլի ազգային հավաքականի համար ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (9 տեղ, 70.61 կգ ընդհանուր քաշով, 3,629.14 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 մարտի 2018 թվականի N Մ-132-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի փետրվարի 23-ի համաձայնեցման թերթը,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված տարբերանշանների տպագրման պարագան (4 տեղ, 18.6 կգ ընդհանուր քաշով, 29,695 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 72,000 դրամ, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1073-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 մարտի 2018 թվականի N Մ - 133 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1183-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործականծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մարտի 2-ի համաձայնեցման թերթը և հաշվի առնելով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի 2018 թվականի փետրվարի 26-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (194 տեղ, 9,344 կգ ընդհանուր քաշով, 83,052 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 11,800 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» մաքսատուն-վարչությունում) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-1183-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ - AF-127G-6806 (G1408B)
Բեռնագիր - NAM2969214
2 x 40' կոնտեյներներ - GESU 5097198 և GESU4411560
Կապարակնիք - C5575996 և 20493668
Բեռնված 2018 թ. փետրվարի 5-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (թեմի) կողմից
Վոթրֆիլդ Ռիջ Փլեյս 700, Գարներ, 27529, Հյուսիսային Կարոլինա, ԱՄՆ

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Հայաստան Արցախ Հիմնադրամ
Բալլինգեր փողոց 17200
ԱՄՆ, ԿԱ, Նորթրիջ, 91325

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Վիկտոր Համբարձումյանի 18 փ., բն. 11
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0033,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ +37493-408-974, +37410-225-229

| Ապրանքի անվանումը | Տեղ | Քանակ/կգ | Արժեք |
|---|---|---|---|
| Անկողնային պարագաներ | 3 | 78 | 450.00 |
| Հագուստ և աքսեսուարներ | 2 | 7 | 170 |
| Կենցաղային պարագաներ (հագուստի կախիչ, կահ-կարասի, խոհանոցային սպասք) | 11 | 102 | 1630 |
| Հիգիենայի պարագաներ (սրբիչներ, օճառ, եղունգի կտրիչ, սանր, ատամի խոզանակ) | 54 | 339 | 11,104.00 |
| Դպրոցական պարագաներ (տետր, թուղթ, մատիտ, մարկեր, սոսինձ, մկրատ, ռետին, սրիչ) | 14 | 108 | 2435 |
| Ասեղնագործության պարագաներ (կտորներ, թելեր, ասեղներ) | 2 | 15 | 248.00 |
| Ամանորյա տուփեր | 10 | 1100 | 5000 |
| Մանկական ծածկոցներ | 4 | 300 | 1000 |
| Փոքր գնդակներ, փուչիկներ | 3 | 100 | 400 |
| Մանկական դոշլիկներ | 2 | 50 | 2600 |
| Գունավորելու և նկարազարդ գրքեր, նկարչական պարագաներ | 4 | 700 | 5000 |
| Տակաշորեր/փաթթաշորեր, ամրակներ | 3 | 100 | 500 |
| Սանրեր/խոզանակներ | 3 | 570 | 2500 |
| Յուղամատիտներ (տուփ), ջրաներկ-9 | 3 | 700 | 3000 |
| Տիկնիկներ | 3 | 100 | 900 |
| Մազակալներ | 2 | 30 | 1000 |
| Մանկական վերնաշապիկ, շապիկ-10/ներքնաշոր-13/վարտիք-3 | 2 | 30 | 500 |
| Գուլպաներ (զույգ) | 6 | 1000 | 8000 |
| Գլխարկներ, շարֆեր-41 | 5 | 300 | 7000 |
| Ձեռնոցներ (զույգ) | 5 | 300 | 5000 |
| Տետրակներ, բլոկնոտներ, գունավոր թուղթ | 4 | 500 | 3300 |
| Մարկերներ (տուփ) | 3 | 500 | 3700 |
| Խաղեր, քարտեր, փազլներ, հաշվիչներ-40 | 2 | 50 | 300 |
| Հայելիներ, նկարի շրջանակներ-7 | 2 | 300 | 1500 |
| Գրենական պիտույքներ. մատիտներ/գուն. մատիտներ (տուփ), գրչատուփ-39, գրիչ - 81 | 5 | 430 | 1800 |
| Ռետիններ-322, մատիտի սրիչներ | 2 | 50 | 400 |
| Մանկական կրծիչներ, չխչխկիկներ, ծծակներ-43 | 2 | 90 | 800 |
| Քանոն, մկրատներ-19, սոսինձ-22 | 3 | 80 | 300 |
| Մանկական ըմպանակ | 4 | 100 | 800 |
| Փափուկ խաղալիքներ, շորից պայուսակ, քսակ-21 | 9 | 700 | 3500 |
| Ստիկերներ / շերտ | 2 | 10 | 100 |
| Ատամի խոզանակներ/խոզանակի տուփ-49/ատամի թել-29 | 5 | 200 | 3000 |
| [illegible] | 5 | 80 | 1365 |
| Սրբիչներ/քիսիկներ/անձեռոցիկ - շորից և թղթից | 2 | 10 | 150 |
| Ձեռքի ամբարձիչ | 2 | 102 | 600.00 |
| Մարդաբեռնատար ավտոմեքենայի ետնամասի ծածկ | 1 | 113 | 3,000.00 |
| Total | 194 | 9,344.0 | 83,052.00 |

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2018 թ. փետրվար ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

| Վայրը | Ապրանքի անվանումը | Տեղ | Բաշխվող քանակը / կգ | Արժեքը ԱՄՆ Դ |
|---|---|---|---|---|
| ՀՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի՝ «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 1000 ընտանիքներ, Ամանորյա տուփերը նախատեսված են շրջանի բոլոր երեխաների համար | Անկողնային պարագաներ | 3 | 78 | 450.00 |
| | Հագուստ և աքսեսուարներ | 2 | 7 | 170 |
| | Կենցաղային պարագաներ (հագուստի կախիչ, կախ-կարասի, խոհանոցային սպասք) | 11 | 102 | 1630 |
| | Հիգիենայի պարագաներ (սրբիչներ, օճառ, եղունգի կտրիչ, սանր, ատամի խոզանակ) | 54 | 339 | 11,104.00 |
| | Դպրոցական պարագաներ (տետր, թուղթ, մատիտ, մարկեր, սոսինձ, մկրատ, ռետին, սրիչ) | 14 | 108 | 2435 |
| | Ասեղնագործության պարագաներ (կտորներ, թելեր, ասեղներ) | 2 | 15 | 248.00 |
| | Ամանորյա տուփեր | 10 | 1100 | 5000 |
| | Մանկական ծածկոցներ | 4 | 300 | 1000 |
| | Փոքր գնդակներ, փուչիկներ | 3 | 100 | 400 |
| | Մանկական դոշլիկներ | 2 | 50 | 2600 |
| | Գունավորելու և նկարազարդ գրքեր, նկարչական պարագաներ | 4 | 700 | 5000 |
| | Տակաշորեր/փաթթաշորեր, ամրակներ | 3 | 100 | 500 |
| | Սանրեր/խոզանակներ | 3 | 570 | 2500 |
| | Յուղամատիտներ (տուփ), ջրաներկ-9 | 3 | 700 | 3000 |
| | Տիկնիկներ | 3 | 100 | 900 |
| | Մազակալներ | 2 | 30 | 1000 |
| | Մանկական վերնաշապիկ, շապիկ-10/ներքնաշոր-13/վարտիք-3 | 2 | 30 | 500 |
| | Գուլպաներ (զույգ) | 6 | 1000 | 8000 |
| | Գլխարկներ, շարֆեր-41 | 5 | 300 | 7000 |
| | Ձեռնոցներ (զույգ) | 5 | 300 | 5000 |
| | Տետրակներ, բլոկնոտներ, գունավոր թուղթ | 4 | 500 | 3300 |
| | Մարկերներ (տուփ) | 3 | 500 | 3700 |
| | Խաղեր, քարտեր, փազլներ, հաշվիչներ-40 | 2 | 50 | 300 |
| | Հայելիներ, նկարի շրջանակներ-7 | 2 | 300 | 1500 |
| | [illegible] | 5 | 430 | 1800 |
| | Ռետիններ-322, մատիտի սրիչներ | 2 | 50 | 400 |
| | Մանկական կրծիչներ, չխչխկիկներ, ծծակներ-43 | 2 | 90 | 800 |
| | Քանոն, մկրատներ-19, սոսինձ-22 | 3 | 80 | 300 |
| | Մանկական ըմպանակ | 4 | 100 | 800 |
| | Փափուկ խաղալիքներ, շորից պայուսակ, քսակ-21 | 9 | 700 | 3500 |
| | Ստիկերներ / չերտ | 2 | 10 | 100 |
| | Ատամի խոզանակներ/խոզանակի տուփ-49/ատամի թել-29 | 5 | 200 | 3000 |
| | [illegible] | 5 | 80 | 1365 |
| | Սրբիչներ/քիփիկներ/անձեռոցիկ - շորից և թղթից | 2 | 10 | 150 |
| Կազմակերպության պահեստի համար | Ձեռքի ամբարձիչ | 2 | 102 | 600.00 |
| արդասիրական ծրագրերի իրագործման համար յենսական նշանակություն ունեցող մարդաբեռնատար ավտոմեքենայի համար | Մարդաբեռնատար ավտոմեքենայի ետնամասի ծածկ | 1 | 113 | 3,000.00 |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 մարտի 2018 թվականի N Մ - 134 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N Մ-121-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 2-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)» N Մ-121-Ա որոշման 1-ին կետում (8,311 կգ ընդհանուր քաշով, 78,743.01 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՄՎ) բառերը փոխարինել (8,990 կգ ընդհանուր քաշով, 80,236.22 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,638 եվրո, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՄՎ) բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ն[illegible]                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Հավելված*

**Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի կողմից ուղարկվող ապրանքների և սարքավորումների ցանկ**

| № | Անվանում | Միավորի գինը (€) | Քանակ | Գումար (€) | Ռեֆերանս | Մատակարար | N° Հաշիվ-ապրանքագիր | Նոր / Օգտագործված | N° Ծանրոց | Առաքման վայր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | PVM_SPR F20-32Z_AR AS M3 MC4 EU F_NPC ([illegible]) | 54,5 | 148 | 9 679,20 | 506797 | [illegible] | 21116345 | Նոր | | Լուսաձոր |
| | Ընդամենը | | | 9 679,20 | | | | | | |
| 8 տեղ. Կշիռ : 2952 կգ | | | | | | | | | | |
| 2 | [illegible] | 15530 | 1 | 15530 | MACHINEXO | ԺԿ Էմ Ֆրանսեզ | 18FC01063 | Նոր | | Լուսաձոր |
| 3 | [illegible] | 5470 | 1 | 5470 | MACHINEXO | ԺԿ Էմ Ֆրանսեզ | 18FC01063 | Նոր | | Լուսաձոր |
| | Ընդամենը | | | 21 000,00 | | | | | | |
| 2 տեղ. Կշիռ : 810կգ | | | | | | | | | | |
| 1 | 140x200 BB3050U լայնաշերտ ծանրոց | 38,32 | 16 | 613,12 | 065B30TSUT14 | Ռեմիվերսալ | 18010243 | Նոր | | Լուսաձոր |
| 2 | 150x200** BB3050U լայնաշերտ ծանրոց | 40,3 | 14 | 564,20 | 065B30TSUT15 | Ռեմիվերսալ | 18010243 | Նոր | | Լուսաձոր |
| 3 | 180x200** BB3050U լայնաշերտ ծանրոց | 45,45 | 15,75 | 715,84 | 065B30TSUT18 | Ռեմիվերսալ | 18010243 | Նոր | | Լուսաձոր |
| 4 | 180x300 BB3050U լայնաշերտ ծանրոց | 55,5 | 16,8 | 932,40 | 065B30TSUT18 | Ռեմիվերսալ | 18010243 | Նոր | | Լուսաձոր |
| 5 | 140x200 սերմերի տոպրակներ 90M ծանրոց x 1000 | 16,889 | 15 | 253,34 | 053A140200 | Ռեմիվերսալ | 18010245 | Նոր | | Լուսաձոր |
| 6 | 140x250 սերմերի տոպրակներ 90M ծանրոց x 1000 | 21,112 | 15 | 316,68 | 053A140250 | Ռեմիվերսալ | 18010245 | Նոր | | Լուսաձոր |
| 7 | 150x200 սերմերի տոպրակներ 90M ծանրոց 1000 | 18,096 | 15 | 271,44 | 053A150200 | Ռեմիվերսալ | 18010245 | Նոր | | Լուսաձոր |
| | Ընդամենը | | | 3 667,01 | | | | | | |
| 5 տեղ կշիռ 590 կգ | | | | | | | | | | |
| 1 | Օժանդակ համակարգ | | | 3000 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 1 | Լուսաձոր |
| 2 | Պոմպային համակարգ | | | 2000 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 2 | Լուսաձոր |
| 3 | Օդափոխիչ | | | 100 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 3 | Լուսաձոր |
| 4 | Տարաբնույթ էլեկտրական նյութերի արկղեր | | | 500 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 4 | Լուսաձոր |
| 5 | Համակարգիչ, ստեղնաշար, մկնիկ | | | 500 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 5 | Լուսաձոր |
| 6 | Տարաբնույթ էլեկտրական նյութերի արկղեր | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 7 | Տարաբնույթ էլեկտրական նյութերի պլաստմասե արկղեր | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 8 | Էլեկտրական շարժիչ "կարմիր" | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | Նստարան | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 10 | Տարբերույթ էլեկտրական նյութերի արկղեր,գրքեր | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 11 | Նյութերի պլաստմասե արկղեր | | | 2000 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 6 | Լուսաձոր |
| 12 | Շարժիչների հենարաններ | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 13 | Դարակավոր պահարան | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 14 | Մետաղական պահարան | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 15 | Էլեկտրական տախտակ պահարանի մեջ | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 16 | "Ձայնի զույգի ու նյութական պատնեշ պահարանի մեջ | | | 1800 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 17 | "Գիլարոն կարգավորիչ "պահարանի մեջ" | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 7 | Լուսաձոր |
| 18 | Ինֆրակարմիր լամպ "պահարանի մեջ" | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 19 | Էլեկտրական ապրանքներ | | | | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 20 | Էլեկտրական պահարան | | | 3000 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 12 | Լուսաձոր |
| 21 | Ուսուցողական նյութերի նստարան | | | 500 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 8 | Լուսաձոր |
| 22 | Էլեկտրական պահարան | | | 500 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 23 | Ուսուցողական նյութերի նստարան | | | 500 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 9 | Լուսաձոր |
| 24 | Տրանսֆորմատոր "Մոխրագույն" | | | 1000 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 25 | Գրքերի արկղեր | | | 500 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 26 | Տարբերույթ էլեկտրական նյութեր ի արկղեր | | | 500 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | 10 | Լուսաձոր |
| 27 | MCC շարժիչի նստարան | | | 200 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 28 | 3 շարժիչի արկղ | | | 500 | | Լա Մարտինիեր լիցեյի նվիրատվություն | | Օգտ. | | Լուսաձոր |
| 29 | 8 պանելների պայտե ծնկերոտ | | | 780 | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 11 | Լուսաձոր |
| 30 | Սան Փառէր մոդուլներ | | | | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 20 | Լուսաձոր |
| 31 | Սան Փառէր մոդուլներ | | | | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 21 | Լուսաձոր |
| 32 | Սան Փառէր մոդուլներ | | | | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 22 | Լուսաձոր |
| 33 | Սան Փառէր մոդուլներ | | | 8880 | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 23 | Լուսաձոր |
| 34 | Սան Փառէր մոդուլներ | | | | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 24 | Լուսաձոր |
| 35 | Սան Փառէր մոդուլներ | | | | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 25 | Լուսաձոր |
| 36 | Սան Փառէր մոդուլներ | | | | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 26 | Լուսաձոր |
| 37 | Սան Փառէր մոդուլներ | | | | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 27 | Լուսաձոր |
| 38 | Այմա Սոլարի տարբեր նյութեր | | | 10619 | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 28 | Լուսաձոր |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 39 | Այմա Սոլարի տարբեր նյութեր | | | 6111 | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 30 | Լուսաձոր |
| 40 | Տարբեր ապրանքներ | | | 500 | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 32 | Լուսաձոր |
| 41 | Ինվերտոր | | | 1000 | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 33 | Լուսաձոր |
| 42 | Ինվերտոր | | | | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 34 | Լուսաձոր |
| 43 | Տարբեր ապրանքներ | | | | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 35 | Լուսաձոր |
| 44 | Տարբեր ապրանքներ | | | 900 | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 36 | Լուսաձոր |
| 45 | Տարբեր ապրանքներ | | | | | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի նվիրատվություն | | Օգտ. | 37 | Լուսաձոր |
| | Ընդամենը | | | 45 890,00 | | | | | | |

20 տեղ Կշիռ: 4638կգ

Ընդհանուր կշիռը 8990 կգ

Ընդհանուր տեղ 35

Ընդհանուր նոր ապրանքների գումար 34.346.22 եվրո

Ընդհանուր հին ապրանքների գումար 45.890 եվրո

Ընդամենը ապրանքների գումար 80.236,22եվրո

Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամի տնօրեն Մ. Կարդյան

Կ.Տ.

FONDS ARMENIEN DE FRANCE

02508231

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**7 մարտի 2018 թվականի N Մ-135-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 5-ի համաձայնեցման թերթը,* ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշման մեջ (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա և դեկտեմբերի 22-ի N Մ-1157-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2,192,067,200 դրամ» բառերը փոխարինել «2,242,067,200 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի քաղաքացի Սուրեն Փափազյանի կողմից «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հասցեով որպես նվիրատվություն ուղարկված տեսախցիկը (մեկ տեղ, 0.7 կգ ընդհանուր քաշով, 300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 60 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից առցանց խանութից ձեռք բերված ապրանքները (177.59 կգ ընդհանուր քաշով, 10,089.47 ԱՄՆ-ի դոլարին



համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 995.62 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արևմտյան» ՄՎ) և ալյումինե պիտակները (1,000 հատ, 0.64 կգ ընդհանուր քաշով, 698.18 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և ծախսերը կազմել են 3.50 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն

Մարի Լու Փափազյանի կողմից

«27» Փետրվարի 2018թ

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | • Աջակցել կրտսեր խմբի (12-18 տարեկան) ՀՀ և ԼՂՀ երիտասարդներին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերել ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում,<br>• Առանձին դասընթացների միջոցով աջակցել կրտսեր խմբի երիտասարդներին զարգացնելու իրենց տեխնոլոգիական գիտելիքները կոնկրետ ուղղություններով,<br>• Առանձին նպատակաուղղված դասընթացների միջոցով աջակցել ավագ խմբի (19-26 տարեկան) ՀՀ երիտասարդներին իրենց մասնագիտական գիտելիքների ընդլայմանը կոնկրետ ուղղություններով,<br>• Խրախուսել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին ստեղծել շփումներ իրենց հասակակից օտարերկրյա երիտասարդների, մասնագետների և արհեստավարժների հետ,<br>• Աջակցել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին իրենց մասնագիտական տեսական գիտելիքները օգտագործել պրակտիկ, գործարար դաշտում` այսպիսով օժանդակելով նոր աշխատատեղերի և գործարար հարաբերությունների ստեղծմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրն իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի սեփական միջոցների, Սեմ և Սիլվա Սիմոնյաններ հիմնադրամի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի, Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն հիմնադրամի, Ջեյ Էյչ Էմ բարեգործական հիմնադրամի ինչպես նաև տարբեր ֆիզիկական անձանց կողմից ստացվող հանգանակությունների, նվիրատվությունների և նվիրաբերությունների հաշվին: Ծրագրի կատարողը, օգտագործելով սույն ծրագրի, ինչպես նաև նախորդ` "Ստեղծարար Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն" և "ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն" ծրագրերի առկա ազատ ռեսուրսները, իրականացնելու է նաև ծրագրից անկախ այլ` Հիմնադրամի կանոնադրությանը չհակասող ձեռնարկատիրական գործունեություն, որից ստացվող զուտ եկամուտը նույնպես ուղղվելու է ծրագրի ֆինանսավորմանը: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Սիմոնյան» կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ` 01245672): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ-ում և ԼՂՀ-ում` ստեղծարար տեխնոլոգիաների բնագա- |



| | | |
|---|---|---|
| | | վառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 2,242,067,200 (երկու միլիարդ երկու հարյուր քառասուներկու միլիոն վաթսունյոթ հազար երկու հարյուր) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են`<br>• Կրտսեր խմբի 12-18 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի նմաև բոլոր շահառուների համար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող ընդհանուր և կոնկրետ ուղղություններով կրթական գործունեությանը: Շահառուների ընտրությունը կլինի բաց անդամագրության միջոցով: Ծրագիրը հերթափոխության միջոցով տարվա ընթացքում կարող է հյուրընկալել հազարավոր երիտասարդներ, այն կգործի գրեթե արտադասարանային ակումբների ոճով, սակայն յուրօրինակ կրթական մեթոդներով: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով:<br>• Ավագ խմբի 19-26 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի արդեն իսկ որոշակի մասնագիտական փորձ ունեցող շահառուների համար, որոնք ինքնուրույն հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող նպատակաուղղված դասընթացներին: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագիրը, լինելով նախորդ «Ստեղծագործական Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն» և «ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրերի շարունակությունը, նախատեսվում է իրականացնել ևս 3 տարով` հետագայում շարունակելու նպատակով, 2017թ-ի հունվար ամսից մինչև 2019թ-ի դեկտեմբեր ամիսը ներառյալ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը պայմանականորեն կարելի է բաժանել որպես մի քանի զուգահեռ իրականացվող միջոցառումների ամբողջություն, որոնք անընդհատ իրականացվելու են հետագա երեք տարիների ընթացքում և միտված են ծրագրի նպատակների իրագործմանը, մասնավորապես` Ծրագրի կատարողն իրականացնելու է հետևյալ միջոցառումները.<br>• ստեղծարար տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդներին ընդհանուր գիտելիքների տրամադրում,<br>• նպատակաուղղված դասընթացների միջոցով խորացնել երիտասարդների մոտ առանձին ուղղվածության գիտելիքները,<br>• տարբեր միջոցառումների կազմակերպման միջոցով խրախուսել կենտրոնի երիտասարդների միջև շփումը,<br>Երեք տարվա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են 2,242,067,200 (երկու միլիարդ երկու հարյուր քառասուներկու միլիոն վաթսունյոթ հազար երկու հարյուր) դրամ որից`<br>• Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի (ուսուցանողներ, ուսմանական բովանդակության մշակողներ և մասնագետներ, վարժանքներ ստուգողներ, ծրագրավորողներ, |

| | | |
|---|---|---|
| | | հաղորդակցման ոլորտի աշխատողներ, խորհրդատուներ և այլն) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -1,345,906,305 (մեկ միլիարդ երեք հարյուր քառասունհինգ միլիոն ինը հարյուր վեց հազար երեք հարյուր հինգ) դրամ:<br>• Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -149,545,145 (մեկ հարյուր քառասունինը միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր քառասունհինգ) դրամ:<br>• Նպատակաուղղված դասընթացների կազմակերպման ծախսեր – 167,040,000 (մեկ հարյուր վաթսունյոթ միլիոն քառասուն հազար) դրամ:<br>• Գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 215,262,400 (երկու հարյուր տասնհինգ միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր) դրամ:<br>• Առկա հիմնական միջոցների (համակարգչային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների՝ այդ թվում հիմնադրամին պատկանող առանձին բնակարանների և բնակելի տների պահպանման և վերանորոգման ծախսեր (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և շենքային պայմանների պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքեր և ծառայություններ) – 38,832,320 (երեսունութ միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսան) դրամ:<br>• Տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր – 52,112,640 (հիսուներկու միլիոն մեկ հարյուր տասներկու հազար վեց հարյուր քառասուն) դրամ:<br>• Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր – 190,360,000 (մեկ հարյուր իննսուն միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) դրամ:<br>• Գործուղման ծասխեր – 68,031,360 (վաթսունութ միլիոն երեսունմեկ հազար երեք հարյուր վաթսուն) դրամ:<br>• Այլ չնախատեսված ծախսեր – 14,977,030 (տասնչորս միլիոն ինը հարյուր յոթանասունյոթ հազար երեսուն) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • 2017-2019թթ-ի ընթացքում 163,288,000 (մեկ հարյուր վաթսուներեք միլիոն երկու հարյուր ութսունութ հազար) դրամի սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում և ներմուծում արտերկրից: Մինչև 2018թ-ի փետրվարի 1-ը ընկած ժամանակահատվածում ներմուծվել է 113,266,095 (մեկ հարյուր տասներեք միլիոն երկու հարյուր վաթսունվեց հազար իննսունհինգ) դրամի համակարգչային տեխնիկա:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 27,072,000 (քսանյոթ միլիոն յոթանասուներկու հազար) դրամի սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում ՀՀ-ից: |



| | | |
|---|---|---|
| | | • 2017-2019թթ-ի ընթացքում 44,052,480 (քառասունչորս միլիոն հիսուներկու հազար չորս հարյուր ութսուն) դրամի գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 171,209,920 (մեկ հարյուր յոթանասունմեկ միլիոն երկու հարյուր ինը հազար ինը հարյուր քսան) դրամի գրասենյակային, կոմունալ, փոստի, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 5,832,320 (հինգ միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսան) դրամի առկա հիմնական միջոցների (համակարգչային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների՝ այդ թվում հիմնադրամին պատկանող առանձին բնակարանների և բնակելի տների պահպանման, վերանորոգման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և տարածքի պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքեր և ծառայություններ):<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 33,000,000 (երեսուներեք միլիոն չորս հարյուր տասնվեց հազար մեկ հարյուր վաթսուն) դրամի առկա հիմնական միջոցների (համակարգչային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների՝ այդ թվում հիմնադրամին պատկանող առանձին բնակարանների և բնակելի տների պահպանման, վերանորոգման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և տարածքի պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքեր և ծառայություններ):<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 50,112,000 (հիսուն միլիոն մեկ հարյուր տասներկու հազար) դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 116,928,000 (մեկ հարյուր տասնվեց միլիոն ինը հարյուր քսանութ հազար) դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 41,690,112 (քառասունմեկ միլիոն վեց հարյուր իննսուն հազար մեկ հարյուր տասներկու) դրամի տարբեր միջոցառումների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 10,422,528 (տաս միլիոն չորս հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր քսանութ) դրամի տարբեր միջոցառումների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 7,488,515 (յոթ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար հինգ հարյուր տասնհինգ) դրամի այլ չնախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 7,488,515 (յոթ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար հինգ |

| | | |
|---|---|---|
| | | հարյուր տասնհինգ) դրամի այլ չնախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Երեք տարվա համար կազմակերպչական ծախսերը կազմում են 216,256,289 (երկու հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր ութսունինը) դրամ, որից՝<br>• Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -149,545,145 (մեկ հարյուր քառասունինը միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր քառասունհինգ) դրամ:<br>• Վարչական մասի գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 22,026,240 (քսաներկու միլիոն քսանվեց հազար երկու հարյուր քառասուն) դրամ:<br>• Վարչական մասի հիմնական միջոցների և տարածքի պահպանման ծախսեր – 1,883,232 (մեկ միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր երեսուներկու) դրամ:<br>• Գործուղման ծախսեր – 20,409,408 (քսան միլիոն չորս հարյուր ինը հազար չորս հարյուր ութ) դրամ:<br>• Վարչական մասով տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր – 5,211,264 (հինգ միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր վաթսունչորս) դրամ:<br>• Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր – 13,536,000 (տասներեք միլիոն հինգ հարյուր երեսունվեց հազար) դրամ:<br>• Այլ չնախատեսված ծախսեր - 3645000 (երեք միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար) դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրն անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել տարբեր շահագրգիռ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական և մասնավոր մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը կմշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար աուդիտի կենթարկվի անկախ աուդիտորի կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

ՏԵՂԵԿԱՆՔ

| ԱՆՎԱՆՈՒՄ | Չ/Մ | ՔԱՆԱԿ | ՄԻԱՎՈՐԻ ԱՐԺԵՔ ԱՄՆ դոլար | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|
| | | | | |
| Շարժական տակդիր/TV Stand | հատ | 3 | 129.99 | 389.97 |
| Ֆոտոխցիկ/ Canon EOS Rebel T6 Digital SLR Camera | Կոմպլեկտ | 13 | 529.95 | 6889.35 |
| Անիմացիոն գրատախտակ/Intuos 3D | հատ | 8 | 169.95 | 1359.60 |
| Անիմացիոն գրատախտակ/Wacom Intuos Pro digital graphic drawing tablet | հատ | 2 | 349.95 | 699.90 |
| Ստեղնաշարի պայուսակ/ Tosnail 61-note Keyboard Big Bag Piano case | հատ | 4 | 16.99 | 67.96 |
| Ստեղնաշար/ iHome full size Mac Keyboard | հատ | 1 | 22.99 | 22.99 |
| Այցաքարտեր/ID Smart Entry Access Card/ 1 տուփ-100 հատ | Տուփ | 30 | 21.99 | 659.70 |
| | | | | |
| Ընդամենը | | | | 10089.47 |

Սիմոնյան Կրթական Հիմնադրամի

Գլխավոր տնօրեն

Մարի Լու Փափազյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**7 մարտի 2018 թվականի N Մ-136-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 5-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա և դեկտեմբերի 22-ի N Մ-1157-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի Վինսենթ Զոմագի հետ (անձնագիր՝ 14DA14795) և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության քաղաքացի Էդգար Կանդրատյանի հետ (անձնագիր՝ C3FH4YX4Y) 2018 թվականի հունվարի 12-ին կնքված՝ N 01-12.01.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,350,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ինֆորմատիկ սոլուշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00061961) 2018 թվականի հունվարի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2 հատ տպիչ ձեռքբերում՝ 1,822,744 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «TVPaint Développement» ընկերության հետ (45 Sente à My, 57000 Metz, France) 2018 թվականի հունվարի 23-ի հաշիվ-ապրանքագրով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է անիմացիոն ծրագրերի արտոնագրի ձեռքբերում՝ 700 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**7 մարտի 2018 թվականի N Մ-137-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N Մ-111-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 5-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ) » N Մ-111-Ա որոշման 1-ին կետում «7,222.80 եվրոյին համարժեք դրամ» բառերը փոխարինել «12,038 եվրոյին համարժեք դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**12 մարտի 2018 թվականի N Մ- 138 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 5-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մարտի 2018 թվականի N Մ- 173 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N 01.1/14-2/4424-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N ՆՉ/22.2/2804-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 16-ի N 06/3-8/12761-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական ոաակել Մյունսթերի համալսարանական կլինիկայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի հասցեով ուղարկված Benchmark XT system օգտագործված բժշկական սարք՝իր պարագաներով (235 կգ ընդհանուր քաշով, 4,252 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,465 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մարտի 2018 թվականի N Մ-174- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 21-ի N 01.1/14-2/3097-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի փետրվարի 21-ի N ՆՁ/22.2/1983-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի փետրվարի 20-ի N 06/3-8/8215-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ձեռք բերված «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (վիրահատական պարագաներ՝ ներակնային ոսպնյակներ, քարտրիջներ և կապսուլայի պահպանման օղակներ՝ 9 տեղ, 57.5 կգ ընդհանուր քաշով, 21,821.64 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ
16 մարտի 2018 թվականի N Մ-175- Ա
քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 23-ի N 01.1/14-2/3256-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի փետրվարի 26-ի N 06/3-8/9078-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից («Nordtech SIA» ֆիրմայից գնված), որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի (համակարգչային տեխնիկա, գործիքներ և լաբորատոր սարքեր ու դրանց բաղադրամասեր՝ 2 տեղ, 48.66 կգ ընդհանուր քաշով, 2,054.69 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 447.52 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

7/11.2

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ,
ԵՊՀ գիտական քաղաքականության
և միջազգային համագործակցության գծով
պրոռեկտոր ____________ Գ. Գ. Գևորգյան

| N: | Նկարագրություն | Քանակը |
|---|---|---|
| 1. | <<Bosch VAC090A>> նմուշի, ավտոմատ ֆիլտրով, 9 գալոն ծավալով, փոշեկուլ | 1 |
| 2. | <<ELEGIANT Combo EM Phillips Pan Head >> նմուշի, M2, M2.5, M3, M4 և M5 տրամագծերով պողպատյա պտուտակների ու պնդողակների հավաքածու | 5 |
| 3. | 180 կտոր M3 պնդօղակների, պտուտակների, վեցանկյուն սողնակների հավաքածու | 5 |
| 4. | <<WD 4TB Silver My Passport Ultra Metal Edition Portable>> նմուշի արտաքին կոշտ սկավառակ | 2 |
| 5. | Արտաքին կոշտ սկավառակի <<WD My Passport Essential>> նմուշի պատյան | 2 |
| 6. | Պնդօղակների, պտուտակների, վեցանկյուն սողնակների հավաքածու՝ 1150 կտորից | 1 |
| 7. | <<Dremel>> նմուշի սիլիկոնի ատրճանակ՝ 940-3 լարով | 2 |
| 8. | Klein Tools 1011 Լարի հետ աշխատանքի գործիք | 2 |
| 9. | Երկու ալիքանի <<Instrustar ISDS220A>> նմուշի վիրտուալ , համակարգչային USB օսցիլոգրաֆ, 60մՀց | 1 |
| 10. | <<Power Bright VC3000W>> նմուշի լարման տրանսֆորմատոր, 3000 ՎՏ բարձրացնող/իջեցնող, 110/120 Վոլտ - 220/240 Վոլտ | 1 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-176- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) 2018 թվականի փետրվարի 27-ի N 09 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 12-ի N 01.1/14-2/4244-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 14-ի N 06/3-8/12131-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի N Մ-501-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Այ Էֆ Փի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00125588) 2018 թվականի փետրվարի 5-ին կնքված՝ N Ա-02-18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում՝ 1,362,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մ/ճ-ի տնօրեն Կարեն Մանվելյանի կողմից

(ստորագրություն)

«15» մարտի 2018թ

Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի Արենի, Խաչիկ, Գնիշիկ (Մոզրով), Տաթև, Տաձատափ և Սվարանց համայնքներին աջակցություն ցուցաբերել ապրուստի դիվերսիֆիկացումը զարգացնելու համար՝ ստեղծելով խթաններ և այլընտրանքային ապրուստի միջոցներ վաստակելու հնարավորություններ՝ պահպանելու համար կենսաբազմազանությունը և էկոհամակարգային ծառայությունները, այսպիսով նվազեցնելու բնական ռեսուրսների ոչ կայուն օգտագործումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 որոշման |
| 3. | Բարեգործը | *Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ),*<br>Հասցե՝ Am Sportplatz 30, 63791 Karlstein am Main, Germany, (Ամ Սփորտպլաց 30, 63791, Կառլշտեյն ամ Մայն, Գերմանիա)<br>Հեռ՝ +49 6188 99560<br><br>*և WWF-Գերմանիա:*<br>Հասցե՝ Reinhardtstraze 18 10117 Berlin, Germany (Ռեյնհարդշտրասե փողոց 18, 10117 Բեռլին, Գերմանիա)<br>Հեռ.՝ +49 30 31 17 77 0<br>+49 30 31 17 77 199 |
| 4. | Ծրագիրը կատարողը | *Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մ/ճ (WWF-Հայաստան)*<br>ք. Երևան, Լյուքսեմբուրգի փ., 7շ., բն. 19 (իրավ.)<br>ք. Երևան, Պռոշյան 11 (գործ.)<br>ՀՎՀՀ՝ 00861992<br>Հեռ՝ +374 10 58 89 83 |

| | | |
|---|---|---|
| | | +374 10 54 61 56<br>Էլ. հասցե՝ office_am@wwfcaucasus.org |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայր՝ Վայոց Ձորի մարզի Գնիշիկ պահպանվող լանդշաֆտ և հարակից տարածքներ, Սյունիքի մարզի Որոտան գետի կիրճը և հարակից տարածքներ:<br>Բնագավառ՝ կենսաբազմազանության պահպանություն և համայնքների զարգացում» |
| 6. | Ծրագրի բյուջեն | 494,021 (չորս հարյուր իննսունչորս հազար քսանմեկ) Եվրո: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի մարզեր և հարակից համայնքներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.06.2015-30.04.2018 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| 1. Կադաստրային տվյալների վերանայման և վերլուծման, հողօգտագործման պլանավորման մասնակցային հանդիպումների կազմակերպման ծառայություններ, ինչպես նաև դրանց կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2015 - հոկտեմբեր 2015 | 5,853 |
| 2. հողօգտագործման պլանի մշակում | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 4,798 |
| 3. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի պահպանության կարգավիճակի օրինականացման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2015 – դեկտեմբեր 2015 | 3,047 |
| 4. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի գերակա պլանի մշակում | հուլիս 2015-սեպտեմբեր 2015 | 8,000 |
| 5. Թիրախային համայնքներում արոտավայրերի բարելավման և կայուն կառավարման միջոցների կիրառման ուղղված ծառայությունների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2016 –հունիս 2017 | 4,899 |
| 6. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքներում պահակակետերի տեղադրում, դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | [illegible] 2016-նոյեմբեր 2016 | 8,712 |
| 7. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքների տեսուչների համար սարքավորումների ձեռքբերում (քարտեզագրական գործիքներ, հեռադիտակներ, | հուլիս 2015 – [illegible]մբեր 2015 | 1,375 |
| | հունվար 2016 – [illegible]մբեր 2016 | 3,391 |



| | | |
|---|---|---|
| հեռահաղորդակցության միջոցներ, ձիեր, թամբեր, առաջին օգնության պարագաներ, թաքնված տեսախցիկներ և այլն): Գործողության կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2017 - դեկտեմբեր 2017 | 10,528 |
| 8. Տաթևի տարածաշրջանում էկոտուրիզմի ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցում (տեղեկատվական նյութերի և ցուցանակների պատրաստում, տուրիստական երթուղիների մշակում և բարելավում, ժամանցային տաղավարների պատրաստում, կանաչապատման աշխատանքներ), ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հոկտեմբեր 2016 – հոկտեմբեր 2017 | 22,149 |
| 9. Էկոտուրիզմի վերաբերյալ վերապատրաստման միջոցառումներին ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | ապրիլ 2016-հոկտեմբեր 2017 | 7,612 |
| 10. Արենի, Խաչիկ, Մոզրով թիրախային համայնքներում խմելու և ոռոգման ջրատարների վերականգնման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև գործունեության կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2015 – դեկտեմբեր 2017 | 45,150 |
| 11. Տաթև, Սվարանց և Տանձատափ թիրախային համայնքներում գյուղական ենթակառուցվածքի բարելավում (խմելու ջրատարների վերականգնում, փողոցների լուսավորում, աղբի կառավարում) | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 26,469 |
| 12. Խաչիկ համայնքի համար տնկիների ձեռք բերում | նոյեմբեր 2016 | 5,000 |
| 13. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի այցելուների կենտրոնի և գյուղմթերքի խանութի շենքի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում<br>Վերջինս պատկանելու է երեք համայնքների՝ Գնիշիկ, Խաչիկ և Արենի, կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին: | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 69,787 |
| Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների գյուղմթերքների հավաքագրման և վաճառման խանութի համար ՌԻԱԶ 23632-148 մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերում | նոյեմբեր 2015 | 13,930 |

| | | |
|---|---|---|
| 14. Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի համար սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016-նոյեմբեր 2017 | 23,735 |
| 15. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար արևային չորանոցի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Այն պատկանելու է երեք համայնքների (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու է բացառապես անվճար հիմունքներով: | մայիս 2016-նոյեմբեր 2017 | 45,704 |
| 16. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Պատկանելու է Տաթև համայնքին և գործելու է բացառապես անվճար հիմունքներով: | մարտ 2016 – դեկտեմբեր 2016 | 35,642 |
| 17. Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար տարբեր կահավորանքի և սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2016-դեկտեմբեր 2017 | 20,425 |
| • գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար Pick-up ավտոմեքենայի ձեռք բերում<br>Մեքենան անհատույց հիմունքներով տրամադրվելու է Տաթև համայնքին և ծրագրի ավարտից հետո նույնպես ծառայելու է գյուղմթերքի ընդունման և փաթեթավորման կետի սպասարկման, ինչպես նաև համայնքի վերահսկողության տակ գտնվող «Սատանի կամուրջ» բնության հուշարձանի պահպանությանն ուղղված աշխատանքների իրականացման նպատակով: | հունիս 2017-նոյեմբեր 2017 | 15,000 |
| 18. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի և Սյունիքի թիրախային համայնքներում գյուղմթերքի արտադրման, փաթեթավորման և իրացման աշխատանքային խմբերի կազմակերպում և վերապատրաստման միջոցառումների և | [illegible]բեր 2016-նոյեմբեր 2017 | 30,791 |



| | | |
|---|---|---|
| մասնակցային հանդիպումների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | | |
| 19. գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| 20. գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| 21. ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| 22. հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| 25. գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| 26. աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |
| 27. Ծրագրի ղեկավարի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 744<br>744<br>744 |
| 28. Հասարակայնության և կապի պատասխանատու անձի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 667<br>667<br>667 |
| 29. Ծրագրի օգնականի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 7,400<br>7,400<br>7,400 |
| 30. Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,600<br>1,600<br>1,600 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 31. Ծրագրի ադմինիստրատորի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,328<br>1,328<br>1,328 |
| | | Ընդամենը | | **494,021** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | **Ծրագրի բաղադրիչների գործողությունները** | **Ժամկետներ** | **Արժույթը Եվրոյով** |
| | | 1. Փաստաթղթերի հետ կապված խորհրդատվական ծառայությունների ձեռք բերում | 2015<br>2017 | 16,900<br>4,798 |
| | | 2. Շինարարական աշխատանքների ձեռք բերում | 2016-2017 | 159,845 |
| | | 3. Սարքավորումների ձեռք բերում | 2015-2016<br>2017 | 29,191<br>30,263 |
| | | 4. Տեղեկատվական նյութերի ձեռք բերում | 2017 | 22,149 |
| | | 5. Ուսուցողական ծառայությունների ձեռք բերում (դասընթացներ, վերապատրաստումներ) | 2016<br>2017 | 2,500<br>40,802 |
| | | 6. Ջրատարերի վերականգնման ծառայությունների ձեռք բերում | 2015 | 71,619 |
| | | 7. Տնկիների ձեռք բերում | 2017 | 5000 |
| | | 8. Ավտոմեքենայի ձեռք բերում | 2015<br>2017 | 13,930<br>15,000 |
| | | 9. գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 10. գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| | | 11. ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| | | 12. հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| | | 13. գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| | | 14. աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը** | **Ժամկետներ** | **Արժույթը Եվրոյով** |
| | | 1. գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| | | 2. գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| | | 3. ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| | | 4. հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| | | 5. գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| | | 6. աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 7. Ծրագրի ղեկավարի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 744<br>744<br>744 |
| | | 8. Հաշվապահության և կապի պատասխանատու անձի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 667<br>667<br>667 |
| | | 9. Ծրագրի օգնականի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 7,400<br>7,400<br>7,400 |
| | | 10. Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,600<br>1,600<br>1,600 |
| | | 11. Ծրագրի ադմինիստրատորի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,328<br>1,328<br>1,328 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | • ՀՀ բնապահպանության նախարարություն<br>• Տարածքային կառավարման նախարարություն<br>• Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն (BMZ)<br>• Գերմանական համագործակցություն (GIZ)<br>• Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամ (CARD)<br>• Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (ՓՄՁ ԶԱԿ)<br>• OXFAM Ինթերնեյշնլ<br>• Արենի, Խաչիկ և Գնիշիկ/Մոզրով (Վայոց Ձոր), Տաթև, Տանձատափ և Սվարանց (Սյունիք) համայնքապետարաններ<br>• «Գնիշիկ» միջհամայնքային բնապահպանական հիմնադրամ | | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ)՝ ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• WWF-Գերմանիա՝ ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով՝ հաշվետվությունների միջոցով:<br>• Ներքին և արտաքին աուդիտի միջոցով | | |

Փաստաթուղթը կազմեց ծրագրերի ադմինիստրատոր Թամարա Շաբոյանը
Հեռ՝ 055-99-70-61

15.03.2018թ .

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մարտի 2018 թվականի N Մ-177- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1067-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) 2018 թվականի մարտի 6-ի N 12 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4532-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 16-ի N 06/3-8/12624-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի «Դիլիջան» ազգային պարկում կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցում» ծրագրի մասին» N Մ-1067-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՁՈՕՖԱՌԻՆԱ ԱՐՏ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00451056) 2018 թվականի մարտի 5-ին կնքված՝ N 01/18-AM0019.1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի մարտի 5-ից մինչև մայիսի 5-ը ընկած ժամանակահատվածում Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության «Դիլիջան» ազգային պարկ 4 (չորս) ազնվացեղ եղջերուի տեղափոխման ծառայությունների իրականացում՝ 9,195 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մ/ճ-ի տնօրեն

Կարեն Մանվելյանի կողմից

«06» մարտի 2018թ

ստորագրություն/ԿՏ

**««Դիլիջան» ազգային պարկում Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցում»**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հիմնել կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն «Դիլիջան» ազգային պարկի 10 հա ցանկապատված տարածքում. |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 որոշման |
| 3. | Բարեգործը | 1. **Կովկասի բնության հիմնադրամի (CNF)**<br>հայաստանյան ներկայացուցչության<br>**հասցե՝** Հայաստան, 0010, Երևան, Վարդանանց փող. փակուղի, 8 շենք<br>**Հեռ.՝** +374-60-273010<br><br>2. **Անդրսահմանային միացյալ քարտուղարություն (TJS)**<br>հայաստանյան ներկայացուցչության<br>**հասցե՝** Հայաստան, 0019, Երևան, Պռոշյան 11/1<br>**Հեռ.՝** +374-10-588983 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մ/ճ (WWF-Հայաստան)<br>**Հասցե՝**<br>ք. Երևան, Լյուքսեմբուրգի փ., 7շ., բն. 19 (իրավ.)<br>ք. Երևան, Պռոշյան 1/1 (գործ.)<br>ՀՎՀՀ՝ 00861992<br>Հեռ՝ +374 10 58 89 83<br>+374 10 54 61 56<br>Էլ. **հասցե՝** office_am@wwfcaucasus.org |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, Տավուշի մարզ, «Դիլիջան» ազգային պարկ<br><br>Բնագավառ՝ բնապահպանություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 172,561 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր վաթսունմեկ) Եվրո,<br><br>որից 100,000 Եվրոն՝ Անդրսահմանային միացյալ քարտուղարության (TJS) կողմից,<br>72,561 Եվրոն՝ Կովկասի բնության հիմնադրամի (CNF) կողմից |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.11.2016-30.06.2018 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| 1. Էլեկտրական ցանկապատի գնում և տեղադրում | մարտ 2017 - հոկտեմբեր 2017 | 1800 |
| 2. Կերակրի աղի գնում | հուլիս 2017 - դեկտեմբեր 2017 | 5000 |
| 3. Անձնակազմի տնակի կառուցում | նոյեմբեր 2016 - նոյեմբեր 2017 | 55028 |
| 4. Խոտի պահեստի կառուցում | նոյեմբեր 2016 - նոյեմբեր 2017 | 12552 |
| 5. Երկու կերակրատեղերի պատրաստում | նոյեմբեր 2016 - դեկտեմբեր 2017 | 1097 |
| 6. Տեխնիկական վերահսկողության իրականացում (անձնակազմի տնակ, խոտի պահեստ, կերամաններ) | նոյեմբեր 2016 - դեկտեմբեր 2017 | 1827 |
| 7. Էլեկտրական ենթակայանի կառուցում | նոյեմբեր 2016 - հունիս 2017 | 6731 |
| 8. Այցելուների համար ենթակառուցվածքների ստեղծում (դիտակետների կառուցում, ինֆորմացիոն վահանակների տեղադրում, տուրիստական երթուղիների մշակում և այլն) | նոյեմբեր 2016-դեկտեմբեր 2017 | 3252 |
| 9. Ազնվացեղ եղջերուի գնում և ներմուծում | հունվար 2017 – հունիս 2018 | 21079 |
| 10. Ազնվացեղ եղջերուի տեղափոխում | հունվար 2017 – հունիս 2018 | 21000 |
| 11. Բազմացման կենտրոնի համար կահույքի և սարքավորումների ձեռքբերում | հունվար 2017 – նոյեմբեր 2017 | 5000 |
| 12. Բազմացման կենտրոնի բացման արարողության կազմակերպում | դեկտեմբեր 2017- հունիս 2018 | 2000 |
| 13. Եղջերուների ձեռքբերման համար Ռուսաստանի, | մարտ 2017 – հունիս 2018 | 10494 |



| Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| Վրաստան, Իրան և այլ երկրներ գործուղման ծախսեր | | |
| 14. Ծրագրի կառավարում (աշխատակազմի հավաքագրում և վերապատրաստում, հանրային իրազեկման միջոցառումների իրականացում և այլն) | նոյեմբեր 2016 – հունիս 2018 | 12062 |
| 2016թ. հուլիսի 1-ից մինչև 2016թ. հոկտեմբերի 30-ը իրականացված գործարքները, որոնց համար արտոնություններ չեն ակնկալվում | | |
| Ենթակառուցվածքների նախագծում (անձնակզմի տնակ, խոտի պահեստ, կերակրամաններ) | մայիս 2016-հոկտեմբեր 2016<br>«ԿԵԼԿԸ ՇՈՋ» ՍՊԸ | 5769 |
| Դեպի բազմացման կենտրոն տանող շուրջ 320 մ անտառային ճանապարհի կառուցում | «Նաիրի-Նունե» ՍՊԸ | 7408 |
| Տեխնիկական վերահսկողության իրականացում Դիլիջան ազգային պարկի անտառային ճանապարհի կառուցման աշխատանքների նկատմամբ | օգոստոս 2016-սեպտեմբեր 2016<br>«ԳԱՍ» շենքերի ու կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ | 462 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 172,561,որից կատարված գործարքների 13639 Եվրոյի համար արտոնու-թյուններ չեն ակնկալվում |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | |

| Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| 1. Էլեկտրական ցանկապատի գնում և տեղադրում | մարտ 2017 - հոկտեմբեր 2017 | 1800 |
| 2. Կերակրի աղի գնում | հուլիս 2017 - դեկտեմբեր 2017 | 5000 |
| 3. Անձնակազմի տնակի կառուցում | նոյեմբեր 2016 - նոյեմբեր 2017 | 55028 |
| 4. Խոտի պահեստի կառուցում | նոյեմբեր 2016 - նոյեմբեր 2017 | 12552 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 5. Երկու կերակրատեղերի պատրաստում | նոյեմբեր 2016 - դեկտեմբեր 2017 | 1097 |
| | | 6. Տեխնիկական վերահսկողության իրականացում (անձնակազմի տնակ, խոտի պահեստ, կերամաններ) | նոյեմբեր 2016 - դեկտեմբեր 2017 | 1827 |
| | | 7. Էլեկտրական ենթակայանի կառուցում | նոյեմբեր 2016 - հունիս 2017 | 6731 |
| | | 8. Այցելուների համար ենթակառուցվածքների ստեղծում (դիտակետների կառուցում, ինֆորմացիոն վահանակների տեղադրում, տուրիստական երթուղիների մշակում և այլն) | նոյեմբեր 2016-դեկտեմբեր 2017 | 3252 |
| | | 9. Ազնվացեղ եղջերուի գնում և ներմուծում | հունվար 2017 – հունիս 2018 | 21079 |
| | | 10. Ազնվացեղ եղջերուի տեղափոխում | հունվար 2017 – հունիս 2018 | 21000 |
| | | 11. Բազմացման կենտրոնի համար կահույքի և սարքավորումների ձեռքբերում | հունվար 2017 – նոյեմբեր 2017 | 5000 |
| | | 12. Բազմացման կենտրոնի բացման արարողության կազմակերպում | հոկտեմբեր 2017- հունիս 2018 | 2000 |
| | | 13. Եղջերուների ձեռքբերման համար Ռուսաստան, Վրաստան, Իրան և այլ երկրներ գործուղման ծախսեր | մարտ 2017 – հունիս 2018 | 10494 |
| | | 14. Ծրագրի կառավարում (աշխատակազմի հավաքագրում և վերապատրաստում, հանրային իրազեկման միջոցառումների իրականացում և այլն) | նոյեմբեր 2016 – հունիս 2018 | 12062 |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | -//- | | |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ բնապահպանության նախարարություն, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, Կովկասի բնության հիմնադրամի (CNF), Անդրսահմանային միացյալ քարտուղարություն (TJS) | | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Անդրսահմանային միացյալ քարտուղարության (TJS)<br>• Կովկասի բնության հիմնադրամի (CNF)<br>• WWF-Կովկասյան գրասենյակ՝ ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով՝ հաշվետվությունների միջոցով:<br>• Ներքին և արտաքին աուդիտի միջոցով | | |

Փաստաթուղթը կազմեց՝ ծրագրերի ադմինիստրատոր՝ Թամարա Շարոյանը    հեռ՝ (055) 997061    06 մարտի 2018թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մարտի 2018 թվականի N Մ-178- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության 2018 թվականի փետրվարի 26-ի N 11/18 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N 01.1/14-2/4427-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 14-ի N 06/3-8/12030-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «409,172,500.00» թիվը փոխարինել «409,672,500.00» թվով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն Լիգալ ընդ Թաքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00101634) 2018 թվականի փետրվարի 6-ին կնքված՝ N LS-001/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում կադրային գործի վարման հետ կապված ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի



չափով, առանց ավելացված արժեքի հարկի և 2018 թվականի փետվարի 19-ին կնքված՝ N LS-002/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կատարելու նախագծի պատրաստում՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի դրույթներին վերջինիս համապատասխանեցման նպատակով՝ 250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանր[illegible]ռավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է*
*<<Հովարդ Կարագյոզյան>> Բժշկական,*
*Բարեգործական Հասարակական Կազմակերպություն*
*Գլխավոր Գործադիր*
*Տնօրեն Ռուզաննա Աղայանի կողմից*
*«15» մարտի, 2018թ.*

## <<ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ>> ԲԺՇԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2018թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ>> ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի և ԼՂՀ տարբեր մարզերի մինչև 14 տարեկան երեխաների անվճար ատամնաբուժական և ակնաբուժական օգնություն ստանալու հնարավորության ապահովումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք, 381 Պարկ ԱվենյուՍաութ.) |
| 4 | Ծրագրի կատարողը | <<Հովարդ Կարագյոզյան>> բժշկական, բարեգործական հասարակական կազմակերպություն, իրավաբանական հասցեն՝ ք.Երևան, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ-01533153: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Երևան, ՀՀ Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզեր և ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքներում առողջապահության բնագավառում |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան Հիշատակի ընկերակցության կողմից համաձայն 20.12.2017թ. դրամաշնորհային պայմանագրի: 2018թ. ծրագիր բյուջեն կազմում է 409.672.500,00 ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | 2017թ.-ի դրությամբ շահառուներն են Երևանի, Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզերի և ԼՂՀ տարածքում բնակվող մինչև 14 տարեկան բոլոր երեխաները, ովքեր կամավոր դիմում են մեր ատամնաբուժական և ակնաբուժական կլինիկաները: 2017թ.- ի ընթացքում 90.620 երեխա ստացել է ատամնաբուժական և 25.856 երեխա՝ ակնաբուժական օգնություն: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2018թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում 2018թ. նախատեսվում է լիարժեքորեն ապահովել ՀՀ-ում և ԼՂՀ-ում գործող ատամնաբուժական կլինիկաներում հաշվառված 90.620 երեխաների ընթացիկ ատամնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը: Տարվա ընթացքում ՀՀ-ում նոր հաշվառվող 11.000-12.000 և ԼՂՀ-ում նոր հաշվառվող 950-1.200 երեխաների լրիվ ատամնաբուժական սանացիայի և կանխարգելիչ միջոցառումների անվճար իրականացումը:<br><br>Ակնաբուժական 5 կաբինետներում նախատեսվում է հաշվառված 7.196 և ԼՂՀ-ում հաշվառված 710 դիսպանսեր հիվանդների ընթացիկ ակնաբուժական օգնության և կանխարգելիչ միջոցառումների իրականացում, ՀՀ-ում նոր հաշվառվող 1.750-1.800 և ԼՂՀ-ում նոր հաշվառվող 100-130 երեխաների ակնաբուժական մանրակրկիտ հետազոտությունների և բուժման կազմակերպում, ակնոցի անհրաժեշտություն ունեցող ՀՀ-ից 1.200-1480 և ԼՂՀ-ից 90-120 երեխաների անվճար ակնոցներով ապահովում, մշտական դեղորայքային բուժման անհրաժեշտություն ունեցող ՀՀ-ից 800-1.000 և ԼՂՀ-ից 120-140 երեխաների անվճար դեղորայքով և համապատասխան բուժական պրոցեդուրաներով ապահովում:<br><br>Ընդհանուր առմամբ 2018թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար նախատեսվում է ՀՀ-ում 92.000-100.000 և ԼՂՀ-ում 8.500-9.000 ատամնաբուժական, և ՀՀ-ում 24.000-26.000 և ԼՂՀ-ում 2.000-3.200 ակնաբուժական հաճախումների լիարժեք ապահովում: Իրականացնելու ենք ակնաբուժական և ատամնաբուժական սկրինինգ գյուղական վայրերում:<br><br>Նշված միջոցառումների իրականացման համար 2018թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը նախատեսված ֆինանսական միջոցներ 409.672.500,00 ՀՀ դրամ, իսկ ըստ ուղղությունների բաշխված է հետևյալ ձևով. |

| | |
|---|---|
| Գնումներ (բուժ. սարքավորումների, գործիքների, դեղորայքի, ակնոցների և ծախսվող ատամնաբուժական պարագաների մատակարարման համար, բժշկական քարտեր, գրենական և գրասենյակային պիտույքներ, համակարգչային տեխնիկա): | 50,500,000.00 |
| Ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության աշխատանքների իրականացում (*բուժ.սարքավորումների չափումներ, բժշկական թափոնների դուրսբերում և ոչնչացում, ռենտգեն ապարատների և կաբինետների դոզաչափում, բուժ.անձնակազմի պրոֆ.զննում և այլն*): | 4,000,000.00 |
| Բուժանձնակազմի վերապատրաստում, փորձի փոխանակում և այդ նպատակներով գործուղումներ | 5,600,000.00 |
| Ծրագիրը իրականացնող վարձու անձնակազմի աշխատավարձ (բժիշկներ, բուժ. քույրեր, բժշկական սարքավորումների տեխնիկական սպասարկողներ, մաքրարարներ) | 241,750,000.00 |
| Վարչական աշխատակիցների աշխատավարձ | 43,000,000.00 |
| Կոմունալ ծախսեր *(4 կլինիկաների էլեկտրաէներգիա, ջուր, հեռախոսավարձ, ինտերնետ, աղբահանություն, գազ, գազի և գազատարի տեխնիկական սպասարկում, հակահրդեհային սպասարկում և այլն)* | 15,000,000.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Տրանսպորտային ծախսեր *(վառելիքի, ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում, տեխնիկական սպասարկում)* | 5,000,000.00 |
| | | Ակնաբուժական և ատամնաբուժական կլինիկաների պահպանության, վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ (2-րդ և 3-րդ եռամսյակներ), տնտեսական ապրանքների գնում *(կազմակերպական ծախսերի շրջանակներում)* | 10,882,500.00 |
| | | Գրասենյակային ծախսեր *(բժշկական և գրասենյակների համակարգչային ծրագրերի սպասարկում, պարագաներ, տեխնիկական սպասարկում և այլն)* | 3,000,000.00 |
| | | Աուդիտ *(նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների) և հաստատումների վճար* | 3,840,000.00 |
| | | Կազմակերպական ծախսերի շրջանակներում կատարվելու են աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության *(չի ակնկալվում օգտվել հարկային արտոնություններից )* | 15,850,000.00 |
| | | *Հարկեր,տուրքեր՝ (անշարժ գույքի և փոխադրամիջոցների գույքահարկ և հողի հարկ)* | 3,000,000.00 |
| | | Մեթոդական և տեղեկատվական գրականության տպագրություն | 4,750,000.00 |
| | | Խորհրդատվական ծառայություններ (կադրերի վարման և այլ իրավաբանական խորհրդատվություն) | 3,500,000.00 |
| | | **Ընդամենը** | **409,672,500.00** |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | *2018թ.հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ծրագրի իրականացման համար կնքվելու են պայմանագրեր բուժ. սարքավորումների, հաճախորդների գրանցման համար նախատեսված համակարգչային ծրագրի, համակարգչային տեխնիկայի, գործիքների, դեղորայքի, ակնոցների և ծախսվող ատամնաբուժական պարագաների մատակարարման համար, բժշկական քարտեր, գրենական և գրասենյակային պիտույքներ: Համակարգչային տեխնիկայի ձեռք բերում՝ ԱՁ Վահագն Մելիք-Մարտիրոսյան - 1.293.200,00 դր.* | 50,500,000.00 |
| | | Հաշվետվությունների և տեղեկատվական նյութերի տպագրում: | 4,750,000.00 |
| | | Օգտվելու ենք տարբեր մատակարարող կազմակերպություններից մատուցվող ծառայություններից՝ | |
| | | Աուդիտորական ծառայությունների մատուցում *(նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների)* - <<Գրանթ Թորնթոն>> ՓԲԸ: | 3,750,000.00 |
| | | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում - փոխադրամիջոցների հետ կապված, այլ մատակարարների հետ, վառելիք, ավտոմեքենաների պահեստամասեր տարբեր մատակարարների միջոցով, | 5,000,000.00 |
| | | Էլեկտրաէներգիայի մատակարարում 4 կլինիկաների համար - <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ>> ՓԲԸ: | 5,500,000.00 |
| | | Բնական գազի մատակարարում, գազատարի տեխնիկական սպասարկում 4 կլինիկաների համար- <<ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ>> ՓԲԸ: | 6,500,000.00 |
| | | Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում և կարգաբերում - <<Էյ-Ի-Ջի Սերվիս>> ՍՊԸ: | 148,382.00 |
| | | Երևանի, Գյումրու և Վանաձորի կլինիկաների շենքերի հակահրդեհային անվտանգության համակարգի տեխնիկական սպասարկում - <<ՍՈՍ ՍԻՍԹԵՄՍ>> ՍՊԸ: | 360,000.00 |
| | | Հեռախոսակապի և Hi-Line Optic /ինտերնետ/ ծառայության մատուցում 4 կլինիկաների համար - <<ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ>> ՓԲԸ (<<ԱՐՄԵՆՏԵԼ>> ՓԲԸ-տեղեկանքը կից ներկայացված է), և այլ օպերատոր[illegible] | 1,700,000.00 |
| | | 4 կլինիկաներում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում - <<ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ>> ՓԲԸ | 600,000.00 |
| | | Այլ կոմունալ ծախսեր | 191,618.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ճառագայթային անվտանգության, սանիտարական վերահսկողության աշխատանք[illegible] չափումներ, ռենտգեն ապարատների և կաբինետների դոզաչափում, բուժ.[illegible], բժշկական թափոնների դուրսբերում և ոչնչացում) - <Էկոլոգիա>> ՍՊԸ, <<Չափագիտության ազգային [illegible]>> ՓԲԸ, ՀՀ ԱՆ Ճառագայթային բժշկ. և այրվածքների գիտական կենտրոն, Թիվ 5 պ[illegible] կլինիկական հիվանդանոց ՓԲԸ | 4,000,000.00 |
| | | Շենքերի պահպանության աշխատանքներ, վերանորոգումներ, կահույք, գրենական պիտույքներ, տնտեսական ապրանքներ, *(կազմակերպական ծախսերի շրջանակներում) շենքի պահպանության համար անհրաժեշտ տնտեսական ապրանքների գնում:* | 10,882,500.00 |
| | | բուժանձնակազմի վերապատրաստում, փորձի փոխանակում և այդ նպատակներով գործուղումներ | 5,600,000.00 |
| | | Կազմակերպական ծախսերի շրջանակներում համակարգչային ծրագրերի սպասարկում. <<Հայկական Ծրագրեր>> ՍՊԸ: | 1,367,400.00 |
| | | Կազմակերպական ծախսերի շրջանակներում կադրերի վարման խորհրդատվություն. <<Գրանթ Թորնթոն Լիգալ ընդ Թաքս>> ՍՊԸ: | 3,000,000.00 |
| | | Կազմակերպական ծախսերի շրջանակներում իրավաբանական խորհրդատվություն. <<Գրանթ Թորնթոն Լիգալ ընդ Թաքս>> ՍՊԸ: | 500,000.00 |
| | | Ընդամենը | 103,849,900.00 |
| | | *ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու ակնկալվող գործարքները և համապատասխան պայմանագրերը պարբերաբար կներկայացվեն Ձեր քննարկմանը:* | |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսերի ընդհանուր արժողությունը կազմում է 79.882.500,00 ՀՀ դրամ և ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի՝ 409.672.500,00 ՀՀ դրամի, 19.49%: | |
| | | վարչական աշխատակիցների աշխատավարձ | 43,000,000.00 |
| | | կոմունալ ծախսեր *(4 կլինիկաների էլեկտրաէներգիա, ջուր, հեռախոսավարձ, ինտերնետ, աղբահանություն, գազ, գազի և գազատարի տեխնիկական սպասարկում, հակահրդեհային սպասարկում և այլն)* | 15,000,000.00 |
| | | տրանսպորտային ծախսեր *(վառելիք, ավտոմեքենաների պահեստամասերի ձեռքբերում, տեխնիկական սպասարկում)* | 2,500,000.00 |
| | | ակնաբուժական և ատամնաբուժական կլինիկաների պահպանության և վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ, տնտեսական ապրանքների գնում | 7,882,500.00 |
| | | գրասենյակային ծախսեր *(գրենական պիտույքներ, գրասենյակների համակարգչային ծրագրեր, պարագաներ, տեխնիկական սպասարկում)* | 1,500,000.00 |
| | | աուդիտ *(նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների)* | 3,750,000.00 |
| | | Ադմինիստրացիայի աշխատակիցների բժշկական ապահովագրության, շենքերի ու ավտոմեքենաների ապահովագրության; ***(չի ակնկալվում օգտվել հարկային արտոնություններից )*** | 2,750,000.00 |
| | | Խորհրդատվական ծառայություններ (կադրերի վարման խորհրդատվություն) | 3,000,000.00 |
| | | Խորհրդատվական ծառայություններ (այլ իրավաբանական խորհրդատվություն) | 500,000.00 |
| | | Ընդամենը | 79,882,500.00 |

| | | |
|---|---|---|
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, Երևանի քաղաքապետարան և Շիրակի, Սյունիքի, Լոռու մարզպետարանների առողջապահության վարչություններ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Հովարդ Կարագյոզյան» հիշատակի ընկերակցությանը /ԱՄՆ/ և «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ խորհուրդին ամսական և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովին եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում, ՀՀ օրենսդրության շրջանակներում ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, Երևանի քաղաքապետարանի և Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզպետարանների առողջապահության վարչությունների կողմից ծրագրի իրականացման ընթացքի ուսումնասիրություն, ՀՀ հարկային ծառայությանը ՀՀ օրենքով սահմանված հաշվետվությունների ներկայացում, ամենամյա աուդիտ, բուժվող երեխաների ծնողներին ծրագրի իրականացման հետ կապված տեղեկատվության տրամադրում՝ ըստ պահանջի: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ - 179 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԽՆՁՐԻՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 7-ի N 01.1/14-2/4191-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 7-ի N 02/14/4096-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 14-ի N 06/3-8/11974-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 13,841,100 դրամ ընդհանուր արժողությամբ «Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղի համայնքային կենտրոնի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2018 թվականի փետրվարի 27-ին կնքված N ԱՀ-Կ-03/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստման, գնման և տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 13,841,100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

**Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է**

**«Հայաստան» համահայկական**
**հիմնադրամի գործադիր տնօրեն**
**Արա Վարդանյան**

**«12» մարտի 2018թ.**

**«Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղի համայնքային կենտրոնի կահավորում »**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղի 250 տեղանոց հանդիսությունների տնով համայնքային կենտրոնը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ (ֆիզիկական և իրավաբանական անձիք) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արցախի Հանրապետություն, Ասկերանի շրջան, Խնձրիստան գյուղ, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 13.841.100,00 դրամ: |

Կ. 3/1

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղի համայնքային կենտրոնը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ փետրվարի 27-ից մինչեւ 2018թ. հուլիսի 27-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնձրիստան գյուղի համայնքային կենտրոնի կահավորում 2018թ փետրվարի 27-ից մինչեւ 2018թ. հուլիսի 27-ը ընկած ժամանակահատվածում: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 13.841.100,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կառավարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մարտի 2018 թվականի N Մ-180-Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 13-ի N 01.1/14-2/4311-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N ՆՁ/2.22/2806-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 14-ի N 06/3-8/12210-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված օրթոպեդիկ պարագաների (4 տեղ, 35.65 կգ քաշով, 4,033 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 180.99 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց հանձնվելու է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի թիվ 1 կլինիկական հիվանդանոցին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**16 մարտի 2018 թվականի N Մ- 181 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N 01.1/14-2/4423-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N ՆՁ/22.2/2799-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 15-ի N 06/3-8/12303-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից գնված ալերգենները (1 տեղ, 3 կգ ընդհանուր քաշով, 2,610 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 120 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**16 մարտի 2018 թվականի N Մ- 182 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4502-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N ՆՁ/22.2/2803-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 16-ի N 06/3-8/12764-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ցյուրիխի Էլեոնորեն հիմնադրամ - մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական պարագաները (1 տեղ, 5 կգ ընդհանուր քաշով, 200 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 62 շվեյցարական ֆրանկ, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**16 մարտի 2018 թվականի N Մ- 183 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 16-ի N 01.1/14-2/4730-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 16-ի N 06/3-8/12835-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ցյուրիխի Էլենոորեն հիմնադրամ - մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքը (1 տեղ, 5 կգ ընդհանուր քաշով, 230 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 88 շվեյցարական ֆրանկ, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մարտի 2018 թվականի N Մ-184- Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4621-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 17-ի N ՆՁ/22.2/3018-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 16-ի N 06/3-8/12765 -18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից Ռոսպոտրեբնադզորի համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի (ՌԴ ՀԿԳԻ) կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ՌԴ Ռոսպոտրեբնադզորի Համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 2016 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդմանն ուղղված նյութատեխնիկական աջակցության պայմանագրի շրջանակներում ստացված բեռի (բժշկական սարքեր՝ 190 կգ քաշով, 1,043,472.03 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, ցանկը կցվում է, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

### ՑԱՆԿ

«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին ՌԴ Ռոսպոտրեբնադզորի Համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի կողմից որպես նվիրաբերություն տրամադրված բեռի

| # | Անվանում | Քանակ | Գումար /ռուբլի/ |
|---|---|---|---|
| 1 | Центрифуга для микропробирок, с охлаждением, с ротором 24x1,5/2,0 мл, 15000 об/мин, управление ручками Штатив с крышкой для пробирок 1,5...2,0 мл на 100 мест. Ցենտրիֆուգ սառեցումով, միկրոփորձանոթների համար, 24x1,5/2,0 մլ, 15000 պտույտ/րոպ., բռնակներով կառավարում | 1 | 420 038,15 |
| 2 | Штатив с крышкой для пробирок 1,5...2,0 мл на 100 мест Շտատիվ 1.5, 2.0 մլ փորձանոթների համար 100 տեղանոց | 3 | 943,23 |
| 3 | Отсасыватель медицинский Утес ОМ-1. Արտածծիչ բժշկական «Утес ОМ-1» | 2 | 47 16,18 |
| 4 | Бокс абактериальной воздушной среды для работы с ДНК-пробами при проведении ПЦР- диагностики БАВ-ПЦР-«Ламинар-С». Բոքս աբակտերիալ օդային միջավայրի ԴՆԹ-նմուշներով աշխատանքի համար ՊՇՌ հետազոտություն իրականացնելիս БАВ- ПЦР-«Ламинар-С». | 1 | 62 882,91 |
| 5 | Амплификатор Veriti с тероблоком 96 x 0.2 мл Ամպլիֆիկատոր «Veriti», 96x0,2մլ տարողությամբ թերմոբլոկով | 1 | 512 445,56 |
| | Ընդամենը | | 1043472,03 |

Ընդհանուր քաշը՝ 190, կգ, ընդհանուր արժեքը՝ 1043472,03 (մեկ միլիոն քառասուներեք հազար չորս հարյուր յոթանասուներկու) ռուսական ռուբլուն և 03 կոպեկին համարժեք դրամ, ներառյալ փոխադրման ծախսերը:

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-185-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 26-ի N 01.1/14-2/3299-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 23-ի N 06/3-8/8845-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի փետրվարի 27-ի -ի N 02/14/3401-18 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2018 թվականի փետրվարի 22-ի N 101/104.3.2/1095-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 13,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Տաշիր քաղաքի դպրոցների և մանկապարտեզի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տ-Ինդասթրի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06952357) 2018 թվականի հունվարի 15-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի մատակարարում՝ 13,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Տաշիրի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

3/4

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 3/18)
13 փետրվարի 2018թ.
հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

### «Տաշիր քաղաքի դպրոցների և մանկապարտեզի մասնակի կահավորում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տաշիր քաղաքի դպրոցների և մանկապարտեզի մասնակի կահավորման աշխատանքների իրականացումը պայմանավորված է առկա գույքի անմխիթար վիճակով և նոր ու ժամանակակից կահույք ունենալու անհրաժեշտությունով: |
| 2. | Ծրագրի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Տաշիր, կրթության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 13,000,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Լոռու մարզ, ք.Տաշիրի քաղաքային համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2018 թվականի փետրվարի 1-ից մինչև 2018 թվականի ապրիլի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ՝ 13,000,000 դրամ: Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.04.2018թ. |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է դպրոցական կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ դիմաց հարկային արտոնություններ՝ 13,000,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չի նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաքի համայնքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-186-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑՈՒ ՄԱՏՈՒՌ ԴԱՄԲԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 27-ի N 01.1/14-2/3477-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 23-ի N 06/3-8/8995-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի փետրվարի 27-ի N 02/14/3406-18 և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2018 թվականի մարտի 1-ի N 01/3.1/1075-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 19,401,620 դրամ ընդհանուր արժողությամբ «Սբ. Հովհաննես Օձնեցու մատուռ դամբարանին կից զանգակատան վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մ. Լամբարյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06800406) 2018 թվականի փետրվարի 8-ին կնքված՝ N 01/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման և ամրակայման շինարարական աշխատանքների իրականացում՝ 19,401,620 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 3/18)
8 փետրվարի 2018թ.
հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

**«Սբ. Հովհաննես Օձունեցու մատուռ դամբարանին կից զանգակատան վերանորոգում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Լոռու մարզի Արդվի համայնքի Սբ. Հովհաննես Օձունեցու մատուռ դամբարանին կից զանգակատան վերանորոգման աշխատանքների իրականացումը, հաշվի առնելով վերջինիս անմխիթար վիճակը և որպես պատմամշակութային արժեք պահպանելու անհրաժեշտությունը: |
| 2. | Ծրագրի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Արդվի համայնք, մշակութային բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 19,401,620 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Լոռու մարզ, Արդվի համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2018 թվականի մարտի 1-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Վերանորոգման և ամրակայման աշխատանքներ՝ 19,401,620 դրամ: Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.06.2018թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է զանգակատան վերանորոգման և ամրակայման աշխատանքներ մատուցման դիմաց հարկային արտոնություններ՝ 19,401,620 դրամ, |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չի նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Լոռու մարզ, Արդվի համայնքի համայնքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**17 մարտի 2018 թվականի N Մ- 187 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ- 259 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**(«Առողջ կյանքի ուղի» ԲՀԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մարտի 16-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1.Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարե-գործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտ-րոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2009 թվա-կանի դեկտեմբերի 11-ի N Մ-820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա և 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-092-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում « 489,743,430 դրամ» բառերը փոխարինել « 659,743,430 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակեր-պության կողմից Իրանի Իսլամական Հանրապետությունից ձեռք բերված և ներմուծված բժշկական սարքավորումներն ու պարագաները (30 տեղ, 2,320 կգ ընդհանուր քաշով, 18,130 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,500 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Հաստատված է՝
«Առողջ կյանքի ուղի» ԲՀԿ-ի
Նախագահ՝ Ալֆերեթ Պետրոսյան-Ավաքյանի կողմից
14.03.2018թվականին

**«ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել բժշկական կենտրոնի կառուցմանը, որը կաջակցի վիրավոր ազատամարտիկների, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքների, բազմանդամ անապահով ընտանիքների և անապահով թոշակառուների առողջության պահպանմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Ծրագրի շրջանակներում ակնկալում ենք օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Պարսկահայ անհատ բարերար Ալֆերեթ Պետրոսյան-Ավաքյանի միջոցներով |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Առողջ կյանքի ուղի» ԲՀԿ – ՀՎՀՀ`01244139, հասցե: Դավիթաշեն 4-րդ թղ., 2ա,40 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը , բնագավառը | Ծրագրի իրականացման վայր՝ ՀՀ, Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս 41/8<br>Բնագավառը – սոցիալական, առողջապահական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 659743430 /վեց հարյուր հիսունինը միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր երեսուն/ ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ներքոհիշյալ շահառուները 10 տարվա ընթացքում անվճար օգտվելու են բժշկական կենտրոնի ծառայություններից:<br>Ծրագրի բարեգործություն ստացողներ են հանդիսանում՝<br>վիրավոր ազատամարտիկները, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքները, բազմանդամ անապահով ընտանիքները, սահմանամերձ գյուղերի անապահով բնակիչները: |
| | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբ - 01.05.2009թվ. ավարտ՝ 31.12.2021թվ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի 1-ին փուլում նախատեսվում է`<br>• շենքի կարկասային աշխատանքների իրականացում – 2009 – 2010 Դավիթաշեն 4-րդ թաղամաս 41/8 հասցեում կառուցվող բժշկական կենտրոնի կարկասային աշխատանքները - ըստ կապալի պայմանագիր 01/09 առ 06.04.2009թվ Հորիզոն 95 ՍՊԸ-ի հհա- ՀՎՀՀ 00801721 339743430 երեք հարյուր երեսունինը միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր երեսուն հազար դրամ առանց ԱԱՀ-ի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ)<br>Ծրագրի 2-րդ փուլում նախատեսվում է`<br>• բժշկական կենտրոնի ներքին հարդարման աշխարանքների սկիզբ և ավարտ 2010 (աշխատանքների համար նախատեսված գումարները կներկայացվեն 2010թ. առանձին ծրագրով)<br>• Բժշկական սարքավորումների, շինարարական ապրանքների, պարագաների անհրաժեշտ դեղորայքի , հիվանդանոցային գույքի և այլ ապրանքների ներմուծում |

| | | |
|---|---|---|
| | | (ակնկալում ենք հարկային և մաքսային արտոնություններ) 2009 -2018 թվականների համար 150000000/ հարյուր հիսուն միլիոն/ ՀՀ դրամի չափով<br>• 2018 -2021 թվականների համար – 170 000000/ հարյուր յոթանասուն միլիոն/ ՀՀ դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող ներմուծվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Դավիթաշեն 4-րդ թաղամաս 41/8 հասցեում կառուցվող բժշկական կենտրոնի կարկասային աշխատանքները - ըստ կապալի պայմանագիր 01/09 առ 06.04.2009թվ Հորիզոն 95 ՍՊԸ-ի հետ- ՀՎՀՀ 00801721 339743430 երեք հարյուր երեսունինը միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր երեսուն հազար դրամ առանց ԱԱՀ-ի: (ակնկալում ենք հարկային արտոնություններ)<br>• Բժշկական սարքավորումների, շինարարական ապրանքների, պարագաների, անհրաժեշտ դեղորայքի , հիվանդանոցային գույքի և շարժական գույքի ներմուծում<br>(ակնկալում ենք հարկային և մաքսային արտոնություններ) 2009 -2018 թվականների համար 150000000/ հարյուր հիսուն միլիոն/ ՀՀ դրամի չափով<br>• 2018 -2021 թվականների համար – 170 000.000/ հարյուր յոթանասուն միլիոն/ ՀՀ դրամի չափով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | • Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն<br>• Առողջապահության նախարարություն |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվում է " Առողջ կյանքի ուղի" ԲՀԿ-ի կողմից վարձված մասնագետների կողմից, ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով ներկայացվում համապատասխան հաշվետվություններ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**17 մարտի 2018 թվականի N Մ - 188 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ- 259 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Առողջ կյանքի ուղի»)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի մարտի 17-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված ստորև նշված բժշկական սարքավորումները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-092-Ա և 2017 թվականի ապրիլի 27-ի N Մ-350-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) ԱՄՆ-ից աչքի դիագնոստիկ սարքավորումներ՝ 4 տեղ, 81 կգ /161.1 lbs/ 5,900 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 241 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, «Արարատյան» ՄՎ .

2) Հարավային Կորեայից աչքի դիագնոստիկ սարք՝ 1 տեղ, 220 կգ, 1,550 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 460 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, «Արարատյան» ՄՎ.

3) Հարավային Կորեայից աչքի տոնոմետր սարք՝ 1 տեղ, 39 կգ, 5,085 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 335 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը, «Արևմտյան» ՄՎ

4) Հարավային Կորեայից աչքի դիագնոստիկ սարքավորում՝ 2 տեղ, 40 կգ, 6,470 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 470 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» ՄՎ

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-189-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 20-ի N 01.1/14-2/2979-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 19-ի N 06/3-8/7660-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության (ԱՄՆ) կողմից ձեռք բերված և Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հասցեով ուղարկված «Քինդլ» ընթերցիչների (106 հատ, 37.06 կգ ընդհանուր քաշով, 12,082.94 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 605.20 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՄՎ) ներմուծման և «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամին՝ շախմատի դպրոցական օլիմպիադայի մասնակիցներին պարգևատրելու նպատակով անհատույց հանձնման ծրագիրը:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-190-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 23-ի N 01.1/14-2/3236-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 23-ի N 06/3-8/8848-18 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Ֆրանսիայի մասնաճյուղի կողմից, որպես օժանդակություն, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության համար՝ սիրիահայ կարիքավոր ընտանիքներին անհատույց բաշխելու նպատակով, Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հասցեով ուղարկված հագուստի և կոշիկների (12 տեղ, 163 կգ ընդհանուր քաշով, 19,387 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,110 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ բեռի համապատասխան ձևակերպումները և բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-191-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 26-ի N 01.1/14-2/3301-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 23-ի N 06/3-8/8844-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մարմարե չմշակված սալերը (մեկ տեղ, 8,860 կգ ընդհանուր քաշով, 2,960 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,740,000 դրամ, «Արևելյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա, դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1160-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

3/11.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-192-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 26-ի N 01.1/14-2/3300-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 23-ի N 06/3-8/8841-18 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի փետրվարի 26-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/1882-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (հնդկաձավար՝ 11,000 կգ քաշով, 330,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, և առևածոկի ծեթ՝ 11,460 հատ, 836,580 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային ու գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Բեռի բաշխման ցանկ*

հինվոյս N 13   08.02.2018

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հնդկաձավար | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 360 | 10.791 |
| | | | Այգուտ | 138 | 360 | 10.791 |
| | | | Մարտունի | 68 | 177 | 5.318 |
| | | | Դպրաբակ | 59 | 154 | 4.614 |
| | | | Վահան | 172 | 448 | 13.450 |
| | | | Կալավան | 22 | 57 | 1.720 |
| | | | Բարեպատ | 5 | 13 | 391 |
| | | | Ձորավանք | 22 | 57 | 1.720 |
| | | | Լճաշեն | 46 | 120 | 3.597 |
| | | | Աղբերք | 43 | 112 | 3.363 |
| | | | Ճամբարակ | 152 | 396 | 11.886 |
| | | | Անտառամեջ | 12 | 31 | 938 |
| | | | Գավառ | 18 | 47 | 1.408 |
| | | | Թթուջուր | 128 | 334 | 10.009 |
| | | Արմավիրի մարզ | Այաշկերտ | 25 | 65 | 1.955 |
| | | | Գեղակերտ | 57 | 149 | 4.457 |
| | | | Արտաշար | 50 | 130 | 3.910 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 10 | 26 | 782 |
| | | | Արտաշատ | 17 | 44 | 1.329 |
| | | | Գետազատ | 14 | 36 | 1.095 |
| | | | Վարդաշեն | 1 | 3 | 78 |
| | | | Մրգանուշ | 10 | 26 | 782 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 18 | 47 | 1.408 |
| | | | Սնաբերդ | 20 | 52 | 1.564 |
| | | | Աբովյան | 50 | 130 | 3.910 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 78 | 2.346 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 109 | 3.284 |
| | | | Ակունք | 33 | 86 | 2.581 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 52 | 1.564 |
| | | Երևան | | 2800 | 7301 | 218.957 |
| | Ընդամենը | | | 4220 | 11000 | 330.000 |

**«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն՝ Ջանիբազյան**

## *Բեռի բաշխման ցանկ*

հնվոյս )N 13   08.02.2018

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (հատ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Արևածաղկի ձեթ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 276 | 27.357 |
| | | | Այգուտ | 138 | 276 | 27.357 |
| | | | Մարտունի | 68 | 136 | 13.480 |
| | | | Դպրաբակ | 59 | 118 | 11.696 |
| | | | Վահան | 172 | 344 | 34.097 |
| | | | Կալավան | 22 | 44 | 4.361 |
| | | | Բարեպատ | 5 | 10 | 991 |
| | | | Զորավանք | 22 | 44 | 4.361 |
| | | | Լճաշեն | 46 | 92 | 9.119 |
| | | | Աղբերք | 43 | 86 | 8.524 |
| | | | Ճամբարակ | 152 | 304 | 30.133 |
| | | | Անտառամեջ | 12 | 24 | 2.379 |
| | | | Գավառ | 18 | 36 | 3.568 |
| | | | Թթուջուր | 128 | 256 | 25.375 |
| | | Արմավիրի մարզ | Այաշկերտ | 25 | 50 | 4.956 |
| | | | Գեղակերտ | 57 | 114 | 11.300 |
| | | | Արտաշար | 50 | 100 | 9.912 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 10 | 30 | 1.982 |
| | | | Արտաշատ | 17 | 51 | 3.370 |
| | | | Գետազատ | 14 | 28 | 2.775 |
| | | | Վարդաշեն | 1 | 2 | 198 |
| | | | Մրգանուշ | 10 | 20 | 1.982 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 18 | 54 | 3.568 |
| | | | Սևաբերդ | 20 | 40 | 3.965 |
| | | | Արզնի | 50 | 150 | 9.912 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 90 | 5.947 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 126 | 8.326 |
| | | | Ակունք | 33 | 99 | 6.542 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 60 | 3.965 |
| | | Երևան | | 2800 | 8400 | 555.075 |
| | Ընդամենը | | | 4220 | 11460 | 836.580 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* Ռ. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-193-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N Մ-486-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 26-ի N 01.1/14-2/3306-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 23-ի N 06/3-8/8847-18 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 15-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հրատարակչական աջակցություն» ծրագրի մասին» N Մ-486-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի մարտի 31-ի N Մ-255-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00009253) 2018 թվականի հունվարի 23-ին կնքված՝ N 0004/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական ծառայությունների մատուցում՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մարտի 2018 թվականի N Մ-194-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 26-ի N 01.1/14-2/3305-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 23-ի N 06/3-8/8828-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Աստրյանս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02252572) 2018 թվականի փետրվարի 5-ին կնքված՝ N AM-AS-18-006 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-195-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 27-ի N 01.1/14-2/3480-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 23-ի N 06/3-8/8843-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա, դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1160-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2018 թվականի հունվարի 19-ին կնքված՝ N 6-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 100 տոննա ցեմենտի ձեռքբերում՝ 4,166,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                                                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-196-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1291-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 27-ի N 01.1/14-2/3479-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 26-ի N 06/3-8/9391-18 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1291-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1226-Ա և 2017 դեկտեմբերի 22-ի N Մ-1162-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2018 թվականի հունվարի 19-ին կնքված՝ N 7-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 200 տոննա ցեմենտի ձեռքբերում՝ 8,333,334 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-197-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1438-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն»բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 28-ի N 01.1/14-2/3521-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 1-ի N 06/3-8/9887-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 05531591) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Շիրակ» բժշկական ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-1438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոգրես-Աուդիտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01012831) 2018 թվականի փետրվարի 9-ին կնքված՝ N 02-09/01-Ա009 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի 2017 թվականի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության աշխատանքների իրականացում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-198-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 26-ի N 01.1/14-2/3298-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 23-ի N 06/3-8/8846-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01266593) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա, 2016 թվականի նոյեմբերի 17-ի N Մ-1107-Ա, 2017 թվականի մարտի 31-ի N Մ-246-Ա և հունիսի 23-ի N Մ-562-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Աուդիտ-Աթար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02537739) 2018 թվականի փետրվարի 13-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մարտի 2018 թվականի N Մ-199-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1439-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 26-ի N 01.1/14-2/3307-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 23-ի N 06/3-8/8993-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02554563) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2016 թվականի մարտի 18-ի N Մ-207-Ա որոշման խմբագրությամբ) իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էյ-Ի-Ջի-սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2018 թվականի փետրվարի 9-ին կնքված՝ N Ե-427 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 79,402 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սամտոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05010891) 2018 թվականի փետրվարի 5-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բետոնե ցցերի ձեռքբերում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Իքս-Արթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01237555) 2018 թվականի հունվարի 23-ին կնքված՝ N 06 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների,



ցանցային և հարակից սարքերի, բաղադրամասերի ու պարագաների ձեռքբերում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00861057) 2018 թվականի հունվարի 24-ին կնքված՝ N 07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատճենահանող մեքենաների, տպող սարքերի, քարթրիջների լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2018 թվականի հունվարի 25-ին կնքված՝ N 08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Հրաշք այգի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01809336) 2018 թվականի հունվարի 25-ին կնքված՝ N 09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թունաքիմիկատների, գյուղատնտեսական գործիքների, գյուղատնտեսական մեքենաների, սերմերի և այլ գյուղատնտեսական ապրանքների մատակարարում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-200-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-058-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 21-ի N 01.1/14-2/3093-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 20-ի N 06/3-8/8213-18 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի 2018 թվականի փետրվարի 12-ի N 7 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1439-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)» N Մ-058-Ա որոշման 1-ին կետի 11-րդ ենթակետում «Ղ-Տելեկոմ» բառերը փոխարինել «ՄՏՍ Հայաստան» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-201-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 28-ի N 01.1/14-2/3541-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 26-ի N 06/3-8/9390-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 19-ի N 02/14/22821-17 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 101/104.3.2/6400-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) իրականացվող՝ 310,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Տաշիր քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գլոբալ քընսթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06951956) 2018 թվականի հունվարի 15-ին կնքված՝ N 15/01/18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 217,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Տ-Մետալ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00902015) 2018 թվականի հունվարի 19-ին կնքված՝ N 19/01/18-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թիթեղի և պարուրակի մատակարարում՝ 7,022,072.20 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝



1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Տաշիրի քաղաքապետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 2/18)
15-հունվարի 2018թ.
հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

**«Տաշիր քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տաշիր քաղաքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների իրականացում, հաշվի առնելով գործող մշակույթի տան անմխիթար վիճակը և նոր ու ժամանակակից, բազմաֆունկցիոնալ մշակույթի տան անհրաժեշտությունը: |
| 2. | Ծրագրի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Տաշիր, մշակույթի բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 310,500,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Լոռու մարզ, ք.Տաշիրի քաղաքային համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Նախագծային աշխատանքների իրականացում՝ 2,500,000 դրամ,<br>2. ներքին և արտաքին հարդարում՝ 305,000,000 դրամ,<br>3. կազմակերպչական ծախսեր բեռնափոխադրումներ իրականացնելու համար ՝ 3,000,000 դրամ:<br>Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.12.2018թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է ծառայությունների մատուցման, Հայաստանի Հանրապետության տարածքում շինարարական նյութերի և ապրանքների ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ:<br>1. դռների, պատուհանների, վիտրաժների պատրաստում և տեղադրում ՝ 22,000,000 դրամ,<br>2. տանիքի վերակառուցման աշխատանքներ՝ 2,100,000 դրամ<br>3. ինժեներական համակարգերի կառուցում և մանտաժում՝ 5,500,000 դրամ,<br>4. ներքին վերանորոգման աշխատանքներ՝ 5,400,000 դրամ,<br>5. արտաքին հարդարման աշխատանքներ՝ 3,000,000 դրամ,<br>6. նախագծային և դիզայներական աշխատանքների իրականացում՝2,500,000 դրամ,<br>7. շինարարական նյութերի և ապրանքների ձեռք բերում՝ 267.000.000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսվում է 3,000,000 դրամի չափով բեռնափոխադրումներ իրականացնելու համար: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաքի համայնքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության գնահատման, վերահսկողության մեխանիզմները | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-202-Ա**
**քաղ. Երևան**

## «ՖՐԱՆՍ - ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՏԱՆՈԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4535-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 20-ի N 06/3-8/13511-18 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 17-ի N ՆՁ/22.2/3032-18 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Հայ-ֆրանսիական առողջապահական շարժում» բարեգործական կազմակերպության կողմից որպես օժանդակություն Գորիսի սրտաբանական կենտրոնի համար «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված դեղորայքի (9 տեղ, 198 կգ ընդհանուր քաշով, 24,322.36 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 400 եվրո, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-203-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1435-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 7-ի N 01.1/14-2/4190-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 15-ի N 06/3-8/12328-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ամրանները (23,000 կգ քաշով, 11,784.54 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը-կազմել են 727,260 դրամ, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի ու հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման» ծրագրի մասին» N Մ-1435-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի օգոստոսի 11-ի N Մ-700-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մարտի 2018 թվականի N Մ-204-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 7-ի N 01.1/14-2/4192-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 15-ի N 06/3-8/12319-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից առցանց խանութներից ձեռք բերված ապրանքները (38.15 կգ ընդհանուր քաշով, 5,334 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 276.70 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա, դեկտեմբերի 22-ի N Մ-1157-Ա և 2018 թվականի մարտի 7-ի N Մ-135-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

| ԱՆՎԱՆՈՒՄ | Չ/Մ | Ք/Կ | ՄԻԱՎՈՐԻ ԱՐԺԵՔ ԱՄՆ դոլար | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|
| Միացուցիչ կապույտ/Lego Technic Pin Long Blue connector Mindstorm NXT part 6558 (Quantity 150) | տուփ | 5 | 8.93 | 44.65 |
| Ներդիր դեղին/ Lego technic new 100pcs yellow bush half bushing ½ cross connector part 4265c | տուփ | 5 | 11.30 | 56.50 |
| Ներքին ատամնավոր շարժանիվ / Lego technic giant huge yellow inner rack gear round circle curved bucket wheel excavator part Piece 24121 42055 | Կոմպ. | 1 | 14.90 | 14.90 |
| Ռոբոտի շարժման փոխանցումատուփի դետալների հավաքածու/ LEGO 46 pcs NEW TECHNIC LINEAR ACTUATOR PRO KIT Cylinder Piston power functions robot car Mindstorms NXT ev3 robotics movement gear axle connector pack | Կոմպ. | 1 | 53.90 | 53.90 |
| Միացուցիչ սև/Lego Technic  Mindstorm  NXT black friction pin connector  part 2780 | տուփ | 2 | 21.99 | 43.98 |
| Ատամնավոր ամրակ/ LEGO Technic 4 piece lot, extended length gear racks, Mindstorms, NXT, EV3 | Կոմպ. | 2 | 14.54 | 29.08 |
| Բարոմետր/ Grove – Barometer (High-Accuracy) | հատ | 1 | 17.90 | 17.90 |
| Ատամնավոր ամրակ/ LEGO Technic 4 piece lot, extended length gear racks, Mindstorms, NXT, EV3 | Կոմպ. | 1 | 12.71 | 12.71 |
| Հեծան/LEGO Technic Light Grey Liftarm 1x15 Studless Beam with Holes Mindstorms Part 32278 (Quantity 8) | Կոմպ. | 2 | 9.5 | 19.00 |
| Միացուցիչ կապույտ/Lego Technic Pin Long Blue connector Mindstorm NXT part 6558 (Quantity 150) | տուփ | 1 | 11.95 | 11.95 |
| Շղթայի մասեր/ LEGO Technic Chain Link x100 | տուփ | 2 | 18.77 | 37.54 |
| Գիրք/ The Unofficial LEGO Technic Builder's Guide, 2nd Edition | հատ | 1 | 27.34 | 27.34 |
| Ատամնավոր ամրակ /Lego® Parts: Technic, Gear Rack 1 x 4 (Pack of 4 - Black) | Կոմպ. | 8 | 7.49 | 59.92 |
| Դյուրակիր համակարգչի մարտկոց /Temark New A1494 Laptop Battery for Apple MacBook Pro 15 inch Retina A1398 (Only fit Late 2013 Mid 2014 Version),fit Retina ME293 ME294 | հատ | 1 | 69.99 | 69.99 |
| Դյուրակիր համակարգչի մարտկոց /Puredick® High Performance New Laptop Battery for Apple A1322 A1278 (Mid 2009, Mid 2010, Early 2011,Mid 2012 Version) Unibody MacBook Pro 13'', fits 661-5557 661-5229 661-5391 020-6547-A 020-6764-A 020-6765-A MB990*/A MB990LL/A MB990J/A MB991LL/A MB990CH/A MB990TA/A MB990ZP/A MB991*/A MD101LL/A MC700LL/A MC374 | հատ | 1 | 39.99 | 39.99 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3ICP5/69/71-2 +Two Free Screwdrivers - 12 Months Warranty [Li-Polymer 6-cell 10.95V 5800mAh/63.5Wh] | | | | |
| Դյուրակիր համակարգիչ/Lenovo ideaPad Y700 17.3" Full HD Gaming Notebook Computer, Intel Core i7-6700HQ 2.6GHz, 16GB RAM, 1TB HDD + 128GB SSD, NVIDIA GeForce GTX 960M GDDR5 4GB, Windows 10, Black | հատ | 2 | 879.00 | 1758.00 |
| Համակարգչի մկնիկ /Dell Optical Mouse MS116 (275-BBCB) | հատ | 2 | 10.09 | 20.18 |
| Համակարգչի ստեղնաշար/ Dell Wired Keyboard KB216 (580-ADMT) | հատ | 2 | 14.49 | 28.98 |
| Դյուրակիր համակարգիչ/Lenovo ideaPad Y700 17.3" Full HD Gaming Notebook Computer, Intel Core i7-6700HQ 2.6GHz, 16GB RAM, 1TB HDD + 128GB SSD, NVIDIA GeForce GTX 960M GDDR5 4GB, Windows 10, Black | հատ | 3 | 899.00 | 2697.00 |
| Համակարգչի ստեղնաշար/ Dell Wired Keyboard KB216 (580-ADMT) | հատ | 3 | 14.50 | 43.50 |
| Համակարգչի մկնիկ /Dell Optical Mouse MS116 (275-BBCB) | հատ | 3 | 10.38 | 31.14 |
| Կցորդիչ էգ/ NXT/EV3 Compatible (female) Sockets-5 pack | Կոմպ. | 1 | 6.45 | 6.45 |
| Մալուխների միացուցիչներ/ Extender Kit for NXT/EV3 Cables (requires soldering) | Կոմպ. | 6 | 4.95 | 29.70 |
| Տեսախցիկ/ Vision Subsystem - Camera for NXT or EV3 (NXTCam-v4) | հատ | 1 | 149.75 | 149.75 |
| Սենսորի ադապտեր/ Grove Sensor Adapter for EV3 or NXT | հատ | 1 | 29.95 | 29.95 |
| Ընդամենը | | | | 5334.00 |

Սիմոնյան Կրթական Հիմնադրամի

Գլխավոր տնօրեն՝

Մարի Լու Փափազյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-205-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2018 թվականի մարտի 7-ի N 01.1/14-2/4159-18 և Հայաստանի Հանրապետության կառավարու-թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 15-ի N 06/3-8/12327-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ծեռք բերված արհեստական խոտածածկի ռետինե գնդիկներ սփռող սարքը (մեկ տեղ, 224 կգ ընդհանուր քաշով, 3,895 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաս-տատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա և 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1073-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Լր. 3/4.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-206-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 7-ի N 01.1/14-2/4161-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 14-ի N 06/3-8/11973-18 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/2578-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (սիսեռ՝ 11,000 կգ քաշով, 1,094,500 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, և լոբի՝ 11,000 կգ քաշով, 1,287,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային ու գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

*Բեռի բաշխման ցանկ*

հնվոյս N 14 08.02.2018

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Սիսեռ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ 138 | 360 | 35.792 |
| | | | Այգուտ 138 | 360 | 35.792 |
| | | | Մարտունի 68 | 177 | 17.636 |
| | | | Դպրաբակ 59 | 154 | 15.302 |
| | | | Վահան 172 | 448 | 44.610 |
| | | | Կալավան 22 | 57 | 5.706 |
| | | | Բարեպատ 5 | 13 | 1.297 |
| | | | Զորավանք 22 | 57 | 5.706 |
| | | | Լճաշեն 46 | 120 | 11.931 |
| | | | Աղբերք 43 | 112 | 11.152 |
| | | | Ճամբարակ 152 | 396 | 39.423 |
| | | | Անտառամեջ 12 | 31 | 3.112 |
| | | | Գավառ 18 | 47 | 4.668 |
| | | | Թթուջուր 128 | 334 | 33.198 |
| | | Արմավիրի մարզ | Այաշկերտ 25 | 65 | 6.484 |
| | | | Գեղակերտ 57 | 149 | 14.784 |
| | | | Առատաշատ 50 | 130 | 12.968 |
| | | Արարատի մարզ | Վեդի 10 | 26 | 2.594 |
| | | | Արտաշատ 17 | 44 | 4.409 |
| | | | Գետազատ 14 | 36 | 3.631 |
| | | | Վարդաշեն 1 | 3 | 259 |
| | | | Մրգանուշ 10 | 26 | 2.594 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան 18 | 47 | 4.668 |
| | | | Սնաբերդ 20 | 52 | 5.187 |
| | | | Աբովյան 50 | 130 | 12.968 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր 30 | 78 | 7.781 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին 42 | 109 | 10.893 |
| | | | Ակունք 33 | 86 | 8.559 |
| | | Տավուշի մարզ | Իջևան 20 | 52 | 5.187 |
| | | Երևան | 2800 | 7301 | 726.208 |
| | Ընդամենը | | 4220 | 11000 | 1.094.500 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* *Ռ. Զամբազյան*

## *Բեռի բաշխման ցանկ*

ինվոյս IN 14 08.02.2018

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Լոբի | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 360 | 42.087 |
| | | | Այգուտ | 138 | 360 | 42.087 |
| | | | Մարտունի | 68 | 177 | 20.738 |
| | | | Դպրաբակ | 59 | 154 | 17.994 |
| | | | Վահան | 172 | 448 | 52.456 |
| | | | Կալավան | 22 | 57 | 6.709 |
| | | | Բարեպատ | 5 | 13 | 1.525 |
| | | | Ձորավանք | 22 | 57 | 6.709 |
| | | | Լճաշեն | 46 | 120 | 14.029 |
| | | | Աղբերք | 43 | 112 | 13.114 |
| | | | Ճամբարակ | 152 | 396 | 46.356 |
| | | | Անտառամեջ | 12 | 31 | 3.660 |
| | | | Գավառ | 18 | 47 | 5.490 |
| | | | Թթուջուր | 128 | 334 | 39.037 |
| | | Արմավիրի մարզ | Ալաշկերտ | 25 | 65 | 7.624 |
| | | | Գեղակերտ | 57 | 149 | 17.384 |
| | | | Արտաշատ | 50 | 130 | 15.249 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 10 | 26 | 3.050 |
| | | | Արտաշատ | 17 | 44 | 5.185 |
| | | | Գետազատ | 14 | 36 | 4.270 |
| | | | Վարդաշեն | 1 | 3 | 305 |
| | | | Մրգանուշ | 10 | 26 | 3.050 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 18 | 47 | 5.490 |
| | | | Սևաբերդ | 20 | 52 | 6.100 |
| | | | Աբովյան | 50 | 130 | 15.249 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 78 | 9.149 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 109 | 12.809 |
| | | | Ակունք | 33 | 86 | 10.064 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 52 | 6.100 |
| | | Երևան | | 2800 | 7301 | 853.933 |
| | Ընդամենը | | | 4220 | 11000 | 1.287.000 |

***«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն Բ. Զամբազյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-207-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-017-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4565-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 15-ի N 06/3-8/12325-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգում, վերակառուցում և պահպանում» ծրագրի մասին» N Մ-017-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քլինլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01847941) 2018 թվականի մարտի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մաքրման աշխատանքների իրականացում՝ ամսական 330,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-208-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4564-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 15-ի N 06/3-8/12484-18 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա, դեկտեմբերի 22-ի N Մ-1157-Ա և 2018 թվականի մարտի 7-ի N Մ-135-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) ԱՄՆ-ի քաղաքացի Անի Ջաֆերյանի հետ (անձնագիր՝ 506671090) 2018 թվականի փետրվարի 16-ին կնքված՝ N 01-16.02.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) ԱՄՆ-ի քաղաքացի Սարգիս Մելքոնյանի հետ (անձնագիր՝ 505402353) 2018 թվականի փետրվարի 23-ին կնքված՝ N 01-23.02.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 440,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-209-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1019-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4566-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 16-ի N 06/3-8/12545-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թիմը ստուդիաներ» ծրագրի մասին» N Մ-1019-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Իսպանիայի Թագավորության քաղաքացի Նոհա Պասկալ Բիսիլիայի հետ (անձնագիր՝ XDC131552) 2018 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 01-01.02.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի Նիտյա Միթթալի հետ (անձնագիր՝ Z3488026) 2018 թվականի փետրվարի 9-ին կնքված՝ N 01-09.02.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,140,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) ՌԴ-ի քաղաքացի Ելենա Գուբինայի հետ (անձնագիր՝ 78 6569368) 2018 թվականի փետրվարի 12-ին կնքված՝ N 01-12.02.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



2. Սույն որոշումն ու[illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստ[illegible] Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտ[illegible]

ՆԱԽԱ[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2018 թվականի N Մ-210-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1211-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 1-ի N 01.1/14-2/3670-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի փետրվարի 26-ի N 06/3-8/9071-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1211-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 8-րդ կետում «2017 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2018 թվականի մարտի 31-ը» բառերով.

2) 11-րդ կետի 1-ին ենթակետում «4,500 ԱՄՆ-ի դոլար» բառերը փոխարինել «7,000 ԱՄՆ-ի դոլար» բառերով.

2) 11-րդ կետի 2-րդ ենթակետում «452,000 ԱՄՆ-ի դոլար» բառերը փոխարինել «449,500 ԱՄՆ-ի դոլար» բառերով:

2. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝



«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01223655) 2018 թվականի հունվարի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ֆինանսական հաշվետվությունների և դրանց կից ծանոթագրությունների անկախ աուդիտի իրականացում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մարտի 2018 թվականի N Մ-211- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4503-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 17-ի N ՆՁ/22.2/3029-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մարտի 17-ի N 06/3-8/13075-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ձեռք բերված «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ակնաբուժական պարագաներ՝ ոսպնյակներ 1 տեղ, 2.5 կգ ընդհանուր քաշով, 441 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մարտի 2018 թվականի N Մ-212- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N Մ-273-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4499-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 17-ի N ՆՉ/22.2/3019-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 17-ի N 06/3-8/13079-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք, բուժ. սարքեր և պարագաներ՝ 26 արկղ, 261 կգ քաշով, 27,582.86 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,453.24 եվրո, ցանկը կցվում է, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2017-2018 թվականներին իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին» N Մ-273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

*Ստացվող բեռի ցանկ*

*համաձայն N 192982, 192701, 193177,193178, 193179, 192190, 189400, 190805, 191212, 192071,192090, 192091, 192295 հաշիվ-ապրանքագրերի*

| Նո | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | (կլինիկական քիմ. i-STAT) CONTROL, աստիճան 1 05P71-01 | 10 | 29.94 |
| 2 | (կլինիկական քիմ. i-STAT) CONTROL, աստիճան 3 05P73-01 | 10 | 29.94 |
| 3 | (կլինիկական քիմ. i-STAT) CONTROL, աստիճան 2 05P72-01 | 10 | 29.94 |
| 4 | Փաթեթավորման իզոթերմալ արկղ 15 , 81 դմ3 | 1 | 110.20 |
| 5 | Մկրատ, MAYO, կոր, 23 սմ, 03-51-23 | 1 | 13.28 |
| 6 | Անզգայացման համար դիմակ +օղակ+ճարմանդ, չափս 5, մեծահասակների համար | 2 | 42.28 |
| 7 | Ասեղ (երակային մուտքի պորտ), 18G, (1.2 x45մմ), միանգամյա օգտագործման, կանաչ | 50 | 12.17 |
| 8 | Մկրատ, METZEMBAUM-NELSON, supercut, կոր, 26 սմ 204-33-26 | 2 | 195.32 |
| 9 | Արյունը դադարեցնող պինցետ, MOYNIHAN, կոր, ատամնավոր, 24սմ, 16-33-24 | 2 | 168.54 |
| 10 | Ասեղ բռնիչ, CRILE-WOOD, 26սմ, նուրբ, HM, 10-20-75 | 2 | 199.58 |
| 11 | Հյուսվածքը բռնող պինցետ, շագանակագույն, 25 սմ, 07.10.25 | 4 | 119.08 |
| 12 | Սեղմիչ, սրտանոթային, DeBAKEY, ատրավմատիկ, 24 սմ, 35 մմ 55-74-40 | 1 | 172.60 |
| 13 | Արյունը դադարեցնող պինցետ, MIXTER, 23սմ, նուրբ,17-07-23 | 2 | 98.98 |
| 14 | Մկրատ, MAYO, կոր, 23 սմ, 03-51-23 | 1 | 13.28 |
| 15 | Արյունը դադարեցնող CRAFOORD (Coller) տեսակի պինցետ, 24սմ, կոր 16-15-24 | 2 | 30.80 |
| 16 | (ESU Force FX) հետադարձ էլեկտրոդ, 50 pcs, HRA5 | 50 | 32.04 |
| 17 | SODALIME անզգայացման վենտիլատոր, 4,5կգ, թիթեղ | 2 | 41.09 |
| 18 | Ձեռնոցներ, վիրաբուժական, լատեքսյա, մեկանգամյա օգտ., ստերիլ, 2 զույգ, 8 | 50 | 76.32 |
| 19 | Ձեռնոցներ, վիրաբուժական, լատեքսյա, մեկանգամյա օգտ., ստերիլ, 2 զույգ, 7 | 50 | 76.32 |
| 20 | Արկղ, համալիր հավաքածու կրծավանդակի համար | 2 | 1620.36 |
| 21 | Մկրատ, METZEMBAUM (NELSON), կոր, 23 սմ 04-33-23 | 4 | 52.76 |
| 22 | (ESU Force FX) էլեկտրոդ երկար սայր, միանգամյա օգտագործման, E1551-6 | 50 | 6057.09 |
| 23 | (կլինիկական քիմ. i-STAT) SIMULATOR ELECTRONIC 06F11-01 | 1 | 359.60 |
| 24 | կլինիկական, քիմիայի անալիզատոր (i-STAT) | 1 | 7659.48 |
| 25 | (կլինիկական քիմ. i-STAT) DOWNLOADER/RECHARGER DRC-300 04P73-04 | 1 | 1623.02 |
| 26 | Անզգայացման համար դիմակ +օղակ+ճարմանդ, չափս 6, մեծահասակների համար XL | 1 | 21.14 |
| 27 | Ատրակուրիում բեսիլատ, 10 մգ/մլ, 2.5 մլ, ամպուլ | 100 | 101.00 |
| 28 | Սուկսամեթոնիումի քլորիդ, 50 մգ/մլ, 2 մլ, ամպուլ | 20 | 21.80 |
| 29 | Ինսուլին, արագ 100 IU/մլ, 10 մլ, սրվակ N | 5 | 36.40 |
| 30 | Փաթեթավորման իզոթերմալ արկղ 16 , 216 դմ3 | 1 | 126.45 |
| 31 | Դակլատասվիր դիհիդրոքլորիդ, 60 մգ. դհտ. | 392 | 496.58 |
| 32 | (Delta Amplon RT-5/6) փոշու ֆիլտր | 20 | 8.00 |
| 33 | Կալիումի քլորիդ, 600մգ, դանդաղ արձակող, դհտ. | 900 | 26.25 |
| 34 | Տենոֆովիր (TDF) / 3TC 300 մգ, դհտ | 540 | 75.06 |
| 35 | Ցենտրիֆուգ, միկրոափսեների համար, Labnet C1000 230V | 1 | 742.13 |
| 36 | Ինկուբատոր (Thermo IMC18) 18 լ, 120-230V 50-60Hz | 1 | 655.42 |
| 37 | Ցեֆտազիդիմ, 1 գ փոշի, սրվակ | 50 | 83.80 |
| 38 | Օնդանսետրոնի հիդրոքլորիդ, համարժեք 2մգ/մլ հիմք, 2մլ, ամպուլ | 50 | 11.45 |

| | | | |
|---|---|---|---|
| 39 | Պարացետամոլ (ացետամինոֆեն), 10մգ/մլ, 50մլ, շիշ | 120 | 121.88 |
| 40 | Տրանեքսամիկ թթու, 100մգ/մլ, 5 մլ ամպուլ | 50 | 34.70 |
| 41 | Լիդոկայինի հիդրոքլորիդ, 1%, լուծույթ, 10մլ, ամպուլ | 40 | 14.56 |
| 42 | Նեոստիգմին մեթիլսուլֆատ, 2,5 մգ/մլ, 1մլ, ամպուլ | 50 | 20.00 |
| 43 | Օդային խողովակ, GUEDEL, բազմակի օգտագործման, no 4, մեծահասակների համար | 10 | 47.90 |
| 44 | Օդային խողովակ, GUEDEL, բազմակի օգտագործման, no 3, դեռահասների համար | 10 | 47.90 |
| 45 | Ծայրամասային նյարդի խթանիչ (Stimuplex HNS12), էլեկտրական | 1 | 750.19 |
| 46 | Օդային խողովակ, GUEDEL, բազմակի օգտագործման, no 5, մեծահասակների համար, խոշոր | 10 | 47.90 |
| 47 | (լարինգոսկոպ) սայր մակինթոշ no 3, կոր, մանրաթել օպտիկ | 5 | 416.45 |
| 48 | Անձեռոցիկ, ստերիլ, ոչ գործվածքից, միանգամյա օգտագործման, ունիվերսալ հավաքածու | 30 | 207.30 |
| 49 | Անզգայացման համար դիմակ +օդակ+ճարմանդ, չափս 4, դեռահասների համար | 4 | 84.56 |
| 50 | Ճնշման մանժետ, 500/1000մլ | 2 | 54.56 |
| 51 | (Stimuplex HNS12), ասեղ A, յուեր, 22Gx50մմ, 4894502 | 25 | 115.06 |
| 52 | Անձեռոցիկ, ստերիլ, ոչ գործվածքից, միանգամյա օգտագործման, 45x75 սմ | 50 | 12.00 |
| 53 | Անձեռոցիկ, ստերիլ, ոչ գործվածքից, միանգամյա օգտագործման, անվավոր սեղանը ծածկելու համար | 50 | 45.00 |
| 54 | Լարինգեալ դիմակ, բազմակի օգտագործման, չափս 3 | 10 | 1350.10 |
| 55 | Լարինգեալ դիմակ, բազմակի օգտագործման, չափս 4 | 10 | 1350.10 |
| 56 | Ասեղ (երակային մուտքի պորտ), 16G, (1.7x55մմ), միանգամյա օգտագործման, մոխրագույն | 50 | 12.33 |
| 57 | Թթվածնի դիմակ, մեծահասակների համար նախատեսված չափ, խողովակով, պարզ | 20 | 12.00 |
| 58 | Թթվածնի դիմակ, բարձր կոնցենտրացիա, մեծահասակների համար նախատեսված չափ | 20 | 17.00 |
| 59 | Ռինգեր լակտատ լուծույթ, 500մլ, flex. տոպրակ, առանց PVC | 60 | 36.63 |
| 60 | Դոպամին հիդրոքլորիդ, 40 մգ/մլ, 5մլ, ամպուլ | 100 | 41.01 |
| 61 | Պրոմետազին հիդրոքլորիդ, 25 մգ/մլ հիմք, 2մլ, ամպուլ | 100 | 38.43 |
| 62 | Նալոքսոնի հիդրոքլորիդ, 0.4մգ/մլ, 1մլ ամպուլ | 50 | 17.65 |
| 63 | Լիպիդ էմուլսիա, 20%, 250ml, flex. տոպրակ, առանց PVC | 50 | 440.25 |
| 64 | Ցեֆազոլին, 1գ, (ՆԵ), փոշի, սրվակ | 100 | 54.01 |
| 65 | Էպինեֆրին (ադրենալին) տարտրատ, 1մգ/մլ հիմք, 1մլ ամպուլ ՆՄ | 100 | 46.96 |
| 66 | Նադրոպարին կալցիում, 2850 UI/0.3 մլ, ներարկիչ | 50 | 58.70 |
| 67 | Նադրոպարին կալցիում, 3800 UI/0.4 մլ, ներարկիչ | 50 | 58.70 |
| 68 | Վանկոմիցինի հիդրոքլորիդ, 1գ հիմք, փոշի, սրվակ | 50 | 129.75 |
| 69 | Լևոբուպիվակայինի հիդրոքլորիդ 5մգ/մլ հիմք, 10 մլ, ամպուլ | 60 | 120.30 |
| 70 | Դեքսամեթազոնի ֆոսֆատ, 4մգ/մլ, 1մլ, ամպուլ | 300 | 70.80 |
| 71 | Դիկլոֆենակ նատրիում, 25մգ/մլ, 3մլ, ամպուլ | 100 | 21.13 |
| 72 | Մետոկլոպրամիդի հիդրոքլորիդ, 5մգ/մլ, 2մլ, ամպուլ | 100 | 22.31 |
| 73 | Նադրոպարին կալցիում, 1900 UI/0.2 մլ, ներարկիչ | 50 | 58.70 |
| 74 | Օնդանսետրոնի հիդրոքլորիդ, համարժեք 8մգ հիմք, դհտ. | 100 | 47.90 |
| 75 | Գաբապենտին, 300 մգ, կապսուլ | 100 | 7.50 |
| 76 | Սալբուտամոլի սուլֆատ, 200 շունչ, 0.1մգ հիմք/շունչ, աէրոզոլ | 50 | 59.00 |
| 77 | Դիկլոֆենակ նատրիում, 25մգ, գաստրոկայուն դհտ. | 1000 | 12.23 |
| 78 | Իզոֆլուրան, հեղուկ, 250մլ, շիշ | 6 | 209.92 |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | | 27582.86 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2018 թվականի N Մ- 213 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՈՒՋԱՆ ԳՅՈՒՂԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 27-ի N 01.1/14-2/3444-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի փետրվարի 26-ի N ՆՁ/22.2/2155-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մարտի 16-ի N 06/3-8/12558-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել հոլանդական «Global Aid Network» բարեգործական (ոչ առևտրային) կազմակերպության միջոցներով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցի հասցեով ուղարկված բեռի (8,500 կգ ընդհանուր քաշով, 29,733.50 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 3,480 եվրո, բեռի բաշխման ցանկը կցվում է,«Արարատյան» ՄՎ) ներմուծման և անհատույց բախշման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

[illegible] Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

30.01.2018թ Ուջանի մ/դ հասցեով ուղարկված բեռի

բաշխման ցանկ

| N | Դպրոցներ | աշ.սեղան/ հատ/ օգտ. | աշ.աթոռ/ հատ/ օգտ. | Խաղեր.գրենական պիտույքներ/արկղ/ օգտ. | Հիվանդանոցային մահճակալ /հատ/ օգտ. | ներքնակ/հատ/ օգտ | Հագուստ մեծահասակի/ արկղ / օգտ. | Հագուստ /կգ/ նոր | Հենակ /զույգ / օգտ. | Սառնարան /հատ / օգտ. | Միկրոալիքային վառարան /հատ/ օգտ. | Անիվավոր քայլակ /հատ/ օգտ. | Փոքր պահարան /հատ / օգտ. | Քայլակներ /հատ / օգտ. | Կենցաղային իրեր/ հատ/ օգտ. | ջրակայուն տակդիր /արկղ/ | Հաշմանդամի սայլակ /հատ / օգտ | Ջեռուցման մարտկոցներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ուջանի մ/դ | 12 | 73 | 4 | | 1 | 253 | 630 | | 1 | 1 | | 2 | | 2 | | | 9 |
| 2. | Շամիրամի հ/դ | 13 | 13 | | | | | | | | | | | | | | | |
| 3. | Սասունիկի մ/դ | 23 | 23 | | | | | | | | | | | | | | | |
| 4. | Կաթնաղբյուրի մ/դ | 20 | 20 | | | | | | | | | | | | | | | |
| 5. | Կաքավաձորի մ/դ | 15 | 15 | | | | | | | | | | | | | | | |
| 6. | Գառնահովիտի մ/դ | 15 | 15 | | | | | | | | | | | | | | | |
| 7. | Թլիկի հ/դ | 10 | 10 | | | | | | | | | | | | | | | |
| 8. | Ծաղկահովիտի հիվանդանոց | | | | 5 | 5 | | | | | | | | | | | | |
| 9. | Թալինի հիվանդանոց | | | | 5 | 5 | | | | | | | | | | | | |
| 10. | Աշտարակի սոցապ. բաժին | | | | | | | | | | | 15 | | | | 7 | 4 | |
| | Ուջանի համայնք | | | | | | 120 | | 1 | | | 5 | | 3 | | 40 | 4 | |
| | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | |
| | Ընդամենը | 108 | 169 | 4 | 10 | 11 | 373 | 630 | 1 | 1 | 1 | 20 | 2 | 3 | 2 | 47 | 8 | 9 |

[illegible] արժեքը նշված է բեռի ցանկում, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 29.733.50 եվրո: Ընդհանուր ճանապարհածախսը կազմում է 3.480.0 եվրո:

[illegible] մ/դ տնօրեն: /Ա.Հարությունյան/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 մարտի 2018 թվականի N Մ- 214 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 15-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված սարքավորումները (2 տեղ, 168 կգ ընդհանուր քաշով, 84,324 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի Մ-593-Ա, օգոստոսի 30-ի N Մ-709-Ա և հոկտեմբերի 11-ի N Մ-877-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**20 մարտի 2018 թվականի N Մ- 215 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործականծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մարտի 19-ի համաձայնեցման թերթը և հաշվի առնելով Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի 2018 թվականի մարտի 16-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված հիգիենայի պարագաների (506 փաթեթ, 1,196.4 կգ ընդհանուր քաշով, 22,120.12 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ 10,220.12 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բաշխման ցանկը կցվում է, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բեռը բաշխելու մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

FAR
Fund for Armenian Relief

**ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**
**FUND FOR ARMENIAN RELIEF–ARMENIA BRANCH**

ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝
Բ. Սարգսյան------

**Բեռնարկղ 80071612-ի բաշխման ցանկ**

| հ/հ | Ստացող | Քանակ՝ փաթեթ | Արժեք ԱՄՆ $ | Տեղափոխման արժեք $ | Ընդամենը $ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մեծն Ներսես ԲՀԿ | 150 | $3,527,67 | $ 3 029.68 | $ 6 557.35 |
| 2 | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ | 150 | $3,527,67 | $ 3 029.68 | $ 6 557.35 |
| 3 | Հայ օգնության ֆոնդի Բարեգործական ճաշարանների շահառուներ | 206 | $4,844.66 | $ 4 160.76 | $ 9 005.42 |
| | Ընդամենը | 506 | $11,900 | $ 10 220.12 | $ 22 120.12 |

Ի լրումն մեր 2018 թվականի մարտի 20-ի
N 15/15.1/4328-18 ելիցի

22 մարտի 2018թ.

No 15/15.1/4480-18

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի մարտի 20-ի «Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշման 1-ի կետում «Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից» բառերը փոխարինել «Դիրեքթ Ռելիֆ կազմակերպության կողմից» բառերով և «22,120.12 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ 10,220.12 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը» բառերը փոխարինել «22,239.77 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ 10,339.77 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը»: Կց[illegible]ված բեռի ցանկը:

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
FUND FOR ARMENIAN RELIEF–ARMENIA BRANCH

ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝
Բ. Սարգսյան

**Բեռնարկղ 80071612-ի բաշխման ցանկ**

| h/h | Ստացող | Քանակ՝ փաթեթ | Արժեք ԱՄՆ $ | Տեղափոխման արժեք $ | Ընդամենը $ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մեծն Ներսես ԲՀԿ | 150 | $3,527,67 | $ 3 089.51 | $ 6 617.18 |
| 2 | Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ | 150 | $3,527,67 | $ 3 089.51 | $ 6 617.18 |
| 3 | Հայ օգնության ֆոնդի Բարեգործական ճաշարանների շահառուներ | 206 | $4,844.66 | $ 4 160.76 | $ 9 005.42 |
|  | Ընդամենը | 506 | $11,900 | $ 10 339.77 | $ 22 239.77 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**26 մարտի 2018 թվականի N Մ - 216 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մարտի 21-ի համաձայնեցման թերթը և հաշվի առնելով Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի 2018 թվականի մարտի 20-ի N AE18/013 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից ձեռքբերված անտառապահների համար նախատեսված համազգեստները՝ իրենց աքսեսուարներով և պահպանություն իրականացնելու համար նախատեսված համապատասխան սարքավորումները (4 տեղ, 86.50 կգ քաշով, 5,758.47 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 59.90 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա, 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-392-Ա, 2016 թվականի նոյեմբերի 11-ի N Մ-1094-Ա և 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N Մ-876-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 մարտի 2018 թվականի N Մ- 217 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՆՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մարտի 15-ի N 01.1/14-2/4563-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N 02/14/4348-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի փետրվարի 13-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/1362-18, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2018 թվականի փետրվարի 9-ի N 03/07-1/1434-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի փետրվարի 8-ի N ՆՁ/22.2/1355-18, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2018 թվականի փետրվարի 9-ի N 07/06.2/1445-18 ու Հայաստանի Հանրապետության առընթեր պետական եկամուտներ կոմիտեի 2018 թվականի մարտի 28-ի N 06/3-8/15454-18 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող՝ 139,723,910 դրամ ընդհանուր արժողությամբ «Հանուն երեխաների սոցիալական և կրթական բարեկեցություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ազատության 27, ՀՎՀՀ՝ 02251537) կնքված ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2012 թվականի փետրվարի 29-ին կնքված N 10864278 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 003 պատվեր-դիմումում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2015 թվականի մարտի 30-ին կնքված համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2012 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված՝ N 116560100 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բաժանորդային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Միկշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01561878) 2012 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված՝ N ՄՍ-31/10-1 և 2014 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված՝ N ՄՍ-23/09-2 (2016 թվականի օգոստոսի 29-ին կնքված համաձայնագրերի խմբագրությամբ) պայմանագրերում նշված գործարքը, որով նախատեսվում է տարածքի վարձակալություն 2018 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 16,174,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Միկշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01561878) 2012 թվականի նոյեմբերի 21-ին կնքված՝ N ՄՍ-21/11 (2017 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված համաձայնագրի) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պահեստային տարածքի վարձակալություն 2018 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 255,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00096001) 2015 թվականի նոյեմբերի 20-ին կնքված՝ N CO854 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 375,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2017 թվականի հուլիսի 1-ին կնքված N 2017/703 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2018 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 570,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտներ կոմիտե:

ՂԵԿԱՎԱՐ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ հայաստանյան
Ներկայացուցչության ղեկավար՝
Անահիտ Մովսիսյան

.................................
22-ը մարտի, 2018 թ.

**«Հանուն երեխաների սոցիալական և կրթական բարեկեցության»**
**ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Նպաստել Հայաստանում երեխաների սոցիալական և կրթական անհրաժեշտ կարիքների ապահովմանը, աջակցել նրանց իրենց հիմնարար իրավունքների լիարժեք իրականացման ուղղությամբ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Սեյվ դը չիլդրեն ԱՄՆ (հասցե՝ ԱՄՆ, 20036 ք. Վաշինգտոն , 2000 L փ. NW, բն. 500, հեռ.՝ 001 (202) 640-6775, կայք՝ www.savethechildren.org)<br>Սեյվ դը չիլդրեն Նիդերլանդներ (հասցե՝ Նիդերլանդներ, ք. Լաան Վան Նյու Ուստ-Ինդի 14-16 – 2593 BT, հեռ.՝ 0031 (0)70 338 44 48 , կայք՝ www.savethechildren.nl)<br>Սեյվ դը չիլդրեն Շվեյցարիա (հասցե՝ Շվեյցարիա, ք. Ցյուրիխ, Սիլբուայ 253, 80-15233-8, հեռ.՝ 0041 (0) 44 267 74 70 , կայք՝ www.savethechildren.ch)<br>Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ (հասցե՝ Մեծ Բրիտանիայի Թագավորություն, ք. Լոնդոն, Սբ. Վինսենթ Հաուզ 30 Օրանժ փ, հեռ. 0044 (0) 203 272 0300, կայք՝ https://www.savethechildren.net) |
| 4 | Ծրագրի կատարողը | Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ հայաստանյան ներկայացուցչություն<br>Ք. Երևան, Ազատության 27, ՀՎՀՀ 02251537<br>"Երևան իմ սեր" հիմնադրամ<br>Ք. Երևան, Իսրայելյան 3, ՀՎՀՀ 00100778 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և Երևան<br>Բնագավառը՝ սոցիալական և կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | 139,723,910ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | 50 փախստականներ Սիրիայից, դպրոցահասակ երեխաներ ունեցող 175 ծնողներ, 0-6 տարեկան երեխաներ ունեցող մոտ 200 ծնողներ, հաշմանդամություն ունեցող մոտ 160 երեխա: |



| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2018 թվականի փետրվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ հայաստանյան ներկայացուցչությունը 2018թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները, որոնք մշակվել են՝ նաև աջակցելու Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած սոցիալական ծրագրերի իրականացմանը: Միջոցառումների հիմքում ընկած են այնպիսի կարևոր սկզբունքներ, ինչպիսին են սոցիալական արդարությունն ու հասցեականությունը, մարդասիրությունը, խտրականության բացառումը և երեխայի լավագույն շահի հաշվառումը:<br><br>**1. Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության**<br>Ծրագրի նպատակն է՝ ընդլայնել երեխաների ներգրավումը և մասնակցությունը ներառական և որակյալ վաղ մանկության զարգացման ծառայություններում, մեծացնել երեխաների, ծնողների և ծառայություն մատուցողների իրազեկվածությունը ներառական վաղ մանկության զարգացման կարևորության, նախադպրոցական կրթության, առողջ ապրելակերպի, սնուցման և հիգիենայի հիմունքների վերաբերյալ:<br><br>Ծրագրի շրջանակներում 2018թ-ին նախատեսված են հետևյալ միջոցառումները.<br><br>ա) Իրականացնել 4 վերապատրաստում, և ամսական մեկական այցելություններ աջակցող վերահսկողություն իրականացնելու 2017 թվին վերանորոգված ու արդեն իսկ գործող հինգ դպրոցահեն նախակրթարանների դաստիարակների և օգնականների ամենօրյա աշխատանքների որակյալ և արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Կարողությունների զարգացմանը զուգահեռ՝ ծրագրի թիմն ու փորձագետները շարունակաբար կիրականացնեն աջակից այցելություններ այս համայնքներ՝ դիտարկելու դաստիարակների աշխատանքը, խորհուրդներ և մասնագիտական աջակցություն նրանց տալու հենց աշխատանքի ընթացքում՝ երեխաների աճի, զարգացման և առողջության վերաբերյալ, ինչպես նաև տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը բարելավելու ուղղությամբ:<br><br>բ) Նույն նախակրթարաններում կշարունակվեն ծնողական հանդիպումները՝ ընդգրկելով 0-6 տարեկան երեխաներ ունեցող 200 ծնողներ: |

գ) Առողջապահական թեմաներով 245 հանդիպումներ կանցկացվեն դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների (175) հետ: Հանդիպումները նպատակ ունեն բարելավելու երեխաների համար մշակվող առողջ սննդակարգը ծնողների կողմից և տրամադրելու նրանց կարևոր գիտելիքներ, թե ինչպիսի հիվանդություններ կարելի է կանխարգելել ճիշտ սնվելու միջոցով:

դ) Տեղական մասնավոր հիմնադրամների կողմից կառուցվող երկու ներառական մանկապարտեզներում Սպիտակ և Գավառ քաղաքներում ծրագրի փորձագիտական թիմը կիրականացնի երկու վերապատրաստում 3-6 տարեկան երեխաների և նրանց ծնողների/խնամակալներին ծառայություն մատուցող բազմամասնագիտական թիմերի անձնակազմի համար:

դ) Ծրագրի շրջանակներում կհարստացվեն ծնողների/խնամակալների գիտելիքները դպրոցական տարիքի երեխաների առողջության, սննդի, հիգիենայի, հաշմանդամության, դեռահասության և զարգացման հնարավոր խնդիրների վերաբերյալ առողջապահական սեմինարների կազմակերպման միջոցով: Կազմակերպությունը կհամագործակցի ՀՀ առողջապահության նախարարությանը կից համապատասխան տեսչությունների հետ՝ իրականացնելու հանրային իրազեկում առողջ ապրելակերպի և առողջ սննդի կարևորության և համապատասխան վարքագիծ ձևավորելու վերաբերյալ, որը կնպաստի առողջ ապրելակերպի սովորույթների ձևավորմանը:

ե) Կազմակերպությունը կհամագործակցի ՀՀ կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կրթության և սոցիալական ոլորտում ներառական քաղաքականության մշակման և կիրառման ուղղությամբ:

զ) Ծրագրի շրջանակներում անց է կացվելու առողջ ապրելակերպ և առողջ սնուցում թեմայով հանրային իրազեկում, որի շրջանակներում կմշակվեն սոցիալական տեսահոլովակներ առողջ ապրելակերպի վերաբերյալ:Նախատեսվում է սոցիալական տեսահոլովակները հեռարձակել հեռուստատեսությամբ հնարավորինս լայն ծածկույթ ապահովելու նպատակով:

Ծրագրի համար նախատեսված ծախսերը կազմում են 28,005,747 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2018 թ. փետրվարից մինչև դեկտեմբեր ամիսները:



**2. Փախստականների ներուժի զարգացման և բարեկեցության խթանում**

Նախատեսվում է իրականացնել Հայաստանում բնակվող, սիրիահայ փախստական երեխաների ինտեգրման աշխատանքներ, մասնավորապես թվով 50 փախստական երեխաների համար կազմակերպել ամառային ճամբար:
Միջոցառումների համար նախատեսված ծախսերը կազմում են 2,715,587 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2018 թ. փետրվարից մինչև դեկտեմբեր ամիսները:

**3. Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար**

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են մի շարք միջոցառումներ՝ նպաստելու Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաների կարողությունների, ինքնուրույնության հմտությունների զարգացմանն ու հասարակությունում ներառմանը: Երևանում բնակվող 0-18 տարեկան հաշմանդամություն ունեցող առնվազն 160 երեխաներ հնարավորություն կունենան ստանալու որակյալ վերականգնողական ծառայություններ, որոնք ուղղված են երեխաների սոցիալականացմանը, հմտությունների զարգացմանն ու անկախ կյանքի հմտությունների ձեռքբերմանը: Նախաձեռնության նպատակներից է նաև ծնողական կրթության և հոգեբանական աջակցության միջոցով հաշմանդամություն ունեցող երեխաների ընտանիքների ամրապնդումն ու ընտանիքում մեծանալու նրանց իրավունքի իրացումը:

ա) Նախատեսվում է աջակցել ծրագրի շրջանակներում ստեղծված հաշմանդամություն ունեցող երեխաներին անվճար սոցիալական ծառայություններ տրամադրող Երևանի կենտրոնի աշխատանքներին: Ներկայումս Երևանի կենտրոնում ծառայություններ են ստանում 45 երեխա: Յուրաքանչյուր երեխայի համար անհատական և խմբային ծառայությունների տևողությունը սահմանվել է նվազագույնը 3 ամիս: Ժամկետը լրանալուց հետո, մասնագետների և ծնողների կողմից վերանայվում են երեխաների անհատական զարգացման պլանները և առաջընթաց գրանցելու դեպքում երեխայի դեպքի վարումը համարվում է ավարտված: Երեխան կարող է շարունակել ծառայությունը որոշակի դադարից հետո, որը պետք է տևի 1-3 ամիս՝ մասնագետների և ծնողների հայեցողությամբ: Տվյալ երեխայի համար վերականգնողական

ծառայության ավարտից հետո, կենտրոնի ծառայությունները հասանելի են դառնում 40 այլ երեխաների համար: Կենտրոնում տրամադրվում են հոգեբանի, սոցիալական աշխատողի, էրգոթերապևտի, ֆիզիոթերապևտի ծառայություններ: Կենտրոնը գործում է «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից տրամադրված տարածքում և վերջինիս հետ սերտ համագործակցությամբ:

բ) Կիրականացվեն մասնագիտական վերապատրաստումներ կենտրոնի մասնագետների հետ՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին որակյալ ու արդյունավետ ծառայություններ մատուցելու նպատակով:

գ) Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ինժեներական լաբորատորիայի հիմնում (սենյակի դիզայն, կահավորում և սարքավորումների տրամադրում, համակարգչային սարքավորումների ձեռքբերում կենտրոնի բազմամասնագիտական թիմի համար ինչպես նաև վերականգնողական աշխատանքների համար դիդակտիկ նյութերի և պարագաների ձեռքբերում:

դ) Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հանրության լայն շրջանանակների իրազեկությունն ու ուշադրությունը հրավիրել հաշմանդամության ու ոլորտին առնչվող առկա խնդիրներին: Հեռուստահաղորդումների և տեսահոլովակների ցուցադրություն միջոցով նախատեսվում է ոլորտին առնչվող մի շարք խնդիրների լուսաբանմանը զուգահեռ շեշտադրում կատարել հաշմանդամություն ունեցող անձնաց կարողությունների, հասարակական վայրերի մատչելիության, ոչ-խտրական վերաբերմունքի, լիարժեք ներառման խնդիրներին ու հավասար հնարավորություններին:

Ծրագրի համար նախատեսված ծախսերը կազմում են 81,447,076 ՀՀ դրամ: Ծրագրի իրականացման ժամկետն է 2018 թ. փետրվարից մինչև դեկտեմբեր ամիսները:

Կազմակերպչական ծախսերը նախատեսված են 27,555,500 ՀՀ դրամի չափով:

Ծրագրի շրջանակներում ձեռք բերվող կահույքը, գույքը, սարքավորումները, համակարգչային տեխնիկան, գրենական և կրթական պարագաներն ամբողջությամբ անհատույց տրամադրվելու են հաշմանդամություն ունեցող երեխաներին անվճար սոցիալական ծառայություններ տրամադրող Երևանի կենտրոնին և ծրագրի շրջանակներում գործող դպրոցահեն նախակրթարաններին:



10 Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ [illegible] ծավալները և [illegible] գի[illegible]

| Անվանումը | Ընդամենը (ՀՀ դրամ) |
|---|---|
| Տեղեկատվական և կրթական նյութերի տպագրության ծառայությունների մատուցում | 12,900,000 |
| Տեղեկատվական և կրթական նյութերի մշակման ծառայությունների մատուցում | 5,650,000 |
| Նախակրթարանների և կենտրոնի համար գրենական և կրթական պարագաների ձեռքբերում | 3,672,000 |
| Հանրային իրազեկման աշխատանքներ, սոցիալական տեսահոլովակների և հեռուստահաղորդման նկարահանում և հեռարձակում | 14,400,000 |
| Կահույքի ձեռքբերում | 15,300,000 |
| Սարքավորումների, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում | 14,500,000 |
| Դիդակտիկ նյութերի և պարագաների ձեռքբերում | 11,550,000 |
| Սեմինարների, աշխատաժողովների և միջոցառումների կազմակերպման նպատակով հյուրանոցային և սննդի մատուցման ծառայություններ | 14,800,000 |
| Հայաստանում Սիրիահայ փախստականների համար ամառային ճամբարի կազմակերպում | 2,896,410 |
| Գրասենյակային տարածքի վարձակալություն և սպասարկում | 19,300,000 |
| Հեռահաղորդակցության ծախսեր (ինտերնետ, հեռախոս) | 4,455,500 |
| Երեխաների զարգացման Երևանի կենտրոնի սպասարկման և կոմունալ ծառայություններ | 10,500,000 |
| Միջոցառումների իրականացման տրանսպորտային ծախսեր | 3,800,000 |
| Ծրագրի գնահատում | 6,000,000 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **139,723,910** |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմա-կերպչական ծախսերը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում են հետևյալ կազմակերպչական ծախսերը.<br>• Գրասենյակային տարածքի վարձակալության և սպասարկման ծախսերը կազմում են 19,300,000 ՀՀ դրամ:<br>• Հեռահաղորդակցության ծախսերը կազմում են 4,455,500 ՀՀ դրամ:<br>• Միջոցառումների իրականացման տրանսպորտային ծախսերը կազմում են 3,800,000 ՀՀ դրամ: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլի հայաստանյան ներկայացուցչությունը կհամագործակցի «Երևան իմ սեր» հիմնադրամի, ՀՀ կրթության և գիտության, աշխատանքի ու սոցիալական հարցերի, առողջապահության, արդարադատության, արտակարգ իրավիճակների նախարարությունների, պետական զբաղվածության գործակալության, բժշկա-սոցիալական փորձաքննություն գործակալության, սոցիալական աջակցության տարածքային մարմինների, ՀԿ-ների, գործատուների, ինչպես նաև ծրագրում ընդգրկված հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Սեյվ դը չիլդրեն ԱՄՆ, Սեյվ դը չիլդրեն Նիդերլանդներ և Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ կազմակերպությունների կողմից, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: Ծրագրի իրականացումը համաձայնեցվում է ՀՀ կրթության և գիտության, աշխատանքի ու սոցիալական հարցերի, առողջապահության, արդարադատության, արտակարգ իրավիճակների նախարարությունների հետ՝ ըստ վերջիններիս հետ կնքված Փոխըմբռնման հուշագրերի: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**28 մարտի 2018 թվականի N Մ- 218 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1169-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 23-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1050-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» N Մ-1169-Ա որոշման 1-ին կետում «27,854,000 դրամի չափով» բառերը փոխարինել «37,000,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 մարտի 2018 թվականի N Մ-219-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N Մ-477-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 22-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի նոր կառուցված բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի ներքին և արտաքին հարդարում» ծրագրի մասին» N Մ-477-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆիլիշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07905342) 2018 թվականի մարտի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծննդատան մասնաշենքի ներքին և արտաքին հարդարման շինարարական աշխատանքների իրականացում՝ 230,413,512 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե...

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 մարտի 2018 թվականի N Մ-220-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մարտի 26-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Ֆրանսիայի մասնաճյուղի կողմից, որպես օժանդակություն, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության համար՝ սիրիահայ կարիքավոր ընտանիքներին անհատույց բաշխելու նպատակով, Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հասցեով ուղարկված կանացի հագուստի (23 տեղ, 3,420 կգ ընդհանուր քաշով, 200,725.95 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,740 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ բեռի համապատասխան ձևակերպումները և բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ